

«DROSCHAK»  
REVUE MENSUELLE

Organe  
de la F. R. A. D.

# ԴՐՕՇԿԿ

№ 1  
JANVIER  
1932  
PARIS (France)



«ՀՈՅ ՅԵՂԱՓՈՒՍԵԿԵՆ ԴԵՐՅՈՒՑՈՒԹՅՈՒՆ» ԳՐԿԱՆ

## 1931-1932

Երբամբ տազնապնդի տարի կարելի է անւանել 1931 թւականը: Ճագնապ ամէն տեղ եւ բոլոր ճակատներում: Քաղաքական ու տնտեսական դեռնի վրա: Ազգային եւ միջազգային չարանիչով:

Երբե՛ք, գուցէ, կեանքը մի անդամից այնքան խոշոր ու համատարած եւ այնպէս հրամայական լուծում պահանջող հարցեր չի առաջադրել, որքան անցեալ տարի: Համաշխարհային տնտեսական տազնապ ու գործադրկութիւն, պարաբերի եւ հատուցումների ինդիք, խաղաղութեան եւ դիմաթափութեան մտահոգութիւններ, Եւրոպայի վերակառուցման ծրագիր, Ազգերի Լիգայի ճգնաժամ, Հին ու Նոր Աշխարհների յարաբերութիւնների լարում, խորհրդային կոնկո, բախումներ Հեռուոր Արեւելքում, հնդկական խմորումներ, սամկախարութիւն ու Փաշլիգ, դրամատիրութեան եւ ընկերվարութեան պայքարի սրում, գաղափարական ու բարոյական սկզբունքների խախտում — հարցեր, որոնցից ամէն մէկը առանձին առած ընդունակ է կրանելու բովանդակ աշխարհի միտքը, խանդարելու մարդկութեան համակեցութիւնը:

1931 թւականը այդ հարցերից եւ ոչ մէկը չլուծեց: Ընդհակառակը, աւելի եւս կոնտրաստ ու ծանրացրեց: Տարին սկսեց անստուգութեան ու չիտի մէջ, չիտի մէջ էլ վերջացաւ:

Կացութիւնը շարժեց աւելի սրեց մասնաւորապէս Միացեալ Նահանգներում, որի տնտեսական տազնապը 1929թ. աշնանից սկսած, մղձաւանջի պէս ծանրացած է ամբողջ աշխարհի կրծքին: Գործերի մէջ՝ ո՛չ մի բարելաւում: արդիւնաբերութիւնը մնաց կիսակեղան. գործադրկութիւնը յարաճուն սաստկացաւ. դրամատների սեանդութիւնը հասաւ անխորհրդաց չարիքի: Ինչ երէկ այնքան բարեկեցիկ եւ իր բարեկեցութեան գիտակցութեամբ հպարտ՝ ամերիկացի աշխատուորը մասունեց ահաւոր թշուառութեան: Ամերիկեան դրամատիրութիւնը կծկեց ու աւելի եւս ամփոփեց իր մէջ, անձնատուր իր աւանդական

մեկուսացման ու եսասիրութեան:

Եւրոպան, որ առանց այն էլ անոյժ դարձաւ էր տնտեսական ու քաղաքական ճգնաժամի մագիլներում, մեծապէս ազդեց ամերիկեան գործերի անկումից: Միմեկից առաջ հատուցումների ու միջազգային պարտքերի անտանելի բեռն տակ հեծող Գերմանիան. ճարտարարեւտի տարրապայման սեղմում, գործազրկութեան նոր ալիք, մարիլ անկում, սնանկութիւններ, չիտիքեան Փաշլիգի շատաշուն յաղթանակներ ընտրութիւնների մէջ, Բրիտանիայի դահլիճի յուսահատական ճիգեր ու թախանձազին դիմումներ Վաշինկթըն, Լոնդոն, Փարիզ, մինչեւ որ Հուլիսի միջամտութիւնն ու վճարումների յետաձգումը մէկ տարով, գէթ մասամբ, մեղմացրեց կացութիւնը եւ շունչ բաշխու հնարաւորութիւն տւեց հանրապետական Գերմանիային:

Դրութիւնը հազիւ էր բարելաւել Գերմանիայում, երբ վրա հասաւ անգլիական օսկու խուճապային անկումը եւ, իբրև անմիջական հետեւանք, աշխատուորական կառավարութեան պատկառումն ու հրատարակար, խորհրդարանական նոր ընտրութիւններ, պահպանողականների յաշնդութիւն, Մակդոնալդի « ազգային կառավարութեան » կազմութիւն: Այստեղ էլ կառավարեց այն, ինչ որ պատահեց Ամերիկայում. ինքնամիտիւմ, ազգային ուժերի համախմբում ու մաքսային բարձր պատնէշներ արտաքին աշխարհի հանդէպ. սրբազան եսասիրութիւն. թո՛ղ ամբողջ աշխարհը կործանի, միայն թէ Բրիտանական կղզիների վարկն ու բարեկեցութիւնը մնան անտասուն: Անգլիան մնաս բարով ասաց «աղաւս փոխանակութեան» ազգային քաղաքականութեան, եւ պահպանողական կուսակցութիւնը, ջլատած պատասկաններն ու րնկերվարականների աջակցութեամբ, գործադրկութեան դրեց մաքսպաշտպանութեան ծրագիրը: Այսպիսով ազատականների ու պահպանողականների երկարատեւ ու յուզումնալից մէկ վիճար փակեց վերջիններին յաղթանակով:

90363 149

292-2000

Մակդոնարդ-Յորդու ինի կառավարութեանն էլ սակայն, չյաջողեց գտնել տաղնապի գարմանը: Մաքառապառանք օրէնքները բարոսքում չբերին: Սակն մնաց ընկած: Արգիւնաբուսութիւնն ու տեսուորը՝ նոյնպէս: Գործազուրկների թիւը չիբճատեց: Չբաւարաւ և կայսրութեան ներքին: արտաքին վիճակը: Զնդական կնճիոր սելլը ևն բարդացաւ: «Կյոյր սեղանի» խորհրդածողովը վիժեց: Գանդկոր համախոհներով վերագարծաւ հարկնիք՝ վերսկսելու համար պայքարը յանուն Զնդկաստանի անկախութեան: Bu'e Britania I ձործատում են կայսրութիւնը կարծաւ սկսել են ստատանել զքերը հակայ կայսրութեան:

Մոայ է գրութիւնը և երոպական միւս երկրներում: Տագնապի ալիքը յորձանք է տւել ամէն կողմ և խեղդում է ամենքին: Իտալիան շարունակում է մնալ Փաշիպի սիրապետութեան տակ: Սպանիան ազատագրած միահեծանութիւնից՝ մեծ դժուարութեամբ հանրապետական կարգը է հաստատել: Բալկանները զուրաւ են պայիս յարտուել ճղածամների բովից: ներքին հակասութիւններ Իւգո-Սլաւիայում, «Թրքասիրական» նուպայի պոթիկում վանիզելութեան Յունաստանում, ծայրայեց գործազրկութիւն՝ Բուլղարիայում, անկայուն ու անհանգիստ մտայինակ Իտալիայում ու Լատա սանում — ամէն կողմ նոյնն է՝ անհանգստութիւն ու տնտեսական անկայունութիւն: Երթագրկութեան ալիքը հասաւ և Տրանսա, սր ամենէն ամուր էր համարում իրեն:

Երոպայից այն կողմ՝ նոյն քաւոր: Մորհուրդները յամառութեամբ շարունակում են «սոցիալիզմի կառուցումը»: հակայ գործարաններ ու Լեիկարակայաններ և կանգնեցնում, իսկ ժողովուրդը հաց չունի ուտելու: «Կոլխոզ» շինարարութիւնն» ու «կուլակաթափութիւնը» առաջ են տարում նախկին թափով: զիւրը վերակազմում է «սոցիալիստական հիմունքներով», իսկ Լեիկի ցորենը պակասում է, անասունները մորթւում են կոտորւում են, Լեիկազործական մեքենաներն ու գործիքները փշանում են:

Համաշխարհային տաղնապը, շատ ծանրօրէն, անդրադարձաւ և խորհրդային իշխանութեան դրա: արտաքին փոխառութիւններն ու վարկերը փակեցին, արտածման շրջանը նեղացաւ: զրամի պակասութեան հետեւանքով պէտք եղաւ կրճատել «Զնդամեակի» կարեւոր մասերը և սեփեր կենտրոնացնել միայն անյետածազելի և խոշոր ձեռնարկների վրա: Բաց թողնեցին նոր դրամանիւներ, որով աւելի եւս րնկաւ չեբմնեցի արժէքը, խորհրդային տրնտեսութիւնը նորից անցաւ ինքնամատակարարման, սեփական միջոցներով գոհանալու սկզբունքին և նորից իրեւց անհաշիւ պարտքերի մէջ:

Բայց Լեի է համաշխարհային տաղնապը ան-

ուպատ էր խորհրդային տնտեսութեան ու ներքին կեանքի համար, միւս կողմից և բարեբար հետեւանքներ ունեցաւ: աշխարհ, կրանած սեփական ցուեքով, ժամանակ ու տրամադրութիւն չունեցաւ կրաղելու խորհրդային իշխանութեամբ ու միջամտելու նրա գործերին: Այլ պատճառով, 1931ին, համեմատարար այլ ևւ թիւը էր հնչում «իտալիկանիայի» ահապապը: անգամ Կրեմլում հասկացան ու հանգստացան, որ Մորհրդ. Միութեան որեւէ արտաքին ոյժ չի սպանուում:

Այլ սպանալիքը, վերջին տասը տարում, երբեք էլ իւրը կերպով գոյութիւն չի ունեցել, իսկ այժմ՝ ևւ առաւել: Ընդհակառակը, պետութիւնները զոդում են սեփական անդորրութեան համար և ի գին անհնարին գոհողութեանց ու նաստացումների աշխատում են շրթխաթել տիրոջ գոյովիճակը: Այս պահուս, Հետուր Արեւելքը փաստօրէն պատերազմի մէջ է: Ճապոնիան զէնքի ուժով գրաւում է Արեւմտեան Մանջուրիան: Չինաստանը վրդուումով ծծծում է քաղաքակիրթ մարդկութեան ու Ազգերի Լիգայի գոււրը, բայց լոյզ չկայ: Ազգերի Լիգան սուտ շոտանող է ձեւանում և սահմանափակում է ժիւյն տաղտկայի նիտերով ու խայտատակ րոտածեկերով: Տեղի է ունենում Չինաստանի նոր անդամահաստութիւն՝ Ազգերի Լիգայի և Ամերիկայի բարեհաճ թոյլտուութեամբ: . . . Այսպիսի պայմաններում ո՞վ է այն քաջը, որ համարձակի զէնք վերցնել խորհրդային իշխանութեան դէմ: Ընդհակառակը, այս վերջինը, օդուներով տիրող մտայնութիւնից, աշխատում է նոր դաշինքներով Լեհաստանի, Իտալիայի և ուրիշների հետ, ամբողջով իր դիրքերը:

Ոչնչով տարբեր է և Մեքսիկո Արեւելքի գրութիւնը, ուր ուշագրութեան կենտրոնում շարունակում է մնալ Թիւրքիան Լամէթ-Քեմալի սիրապետութեան տակ: Բնականաբար, ընդհանուր տաղնապը սուր կերպով զգացւեց և Թիւրքիայում՝ յարատեւ տաղնապների այս դասական երկրում: Պետական քիւզլէի արտասովոր բաց, առեւտրական խիստ աննպաստ հաշիւը, արտածութեան անկում, ներքին շուկաների սպառում, ապրուստի սղում, գործերի թոյլութիւն, դրամի պակաս, արտաքին փոխառութիւնների անկարելիութիւն, փնտստուքներ ամերիկական դրամատներում ու սակարաններում — ահա տաղնապի անմիջական արտայայտութիւնը:

Բայց, ինչպէս և խորհրդային աշխարհում, համաշխարհային դժուարութիւնները Թիւրքիայի համար էլ բարիք եղան միաժամանակ: Ազատ դրսի աչքերից ու միջամտութիւններից, յենւած բուլճարիկների անվերապահ օժանդակութեան վրա՝ Լամէթ փաշայի կառավարութիւնը աշխատեց և աշխատում է հաշուեյարդարել եմթարիկը բոլոր ներքին խոշըն-

պտանները եւ, ստաջին հերթին, զսպել ընդդիմադիր ու այլամերժ տարրերը, մասնաւանդ, պետութեան արեւելեան մասերում, որոնք այսօր թափաբարձ են հանդիսանում այլեւս մշտական երեւոյթի կարգն անցած քրդական խտովութիւնները:

Անցեալ տարւոյ ընթացքին քրդական խոչըր պատճառներով տեղի չունեցաւ, իրեն հետեւած այն միջոցները, որ թիւրքիան, Պարսկաստանն ու խորհրդային իշխանութիւնը, համաձայնեցան ընդհանուր ճակատով, ձեռք առին Արարատի շրջանում տեղի ունեցող շարժումների դէմ: Սակայն, ներքին խտովութիւններն ու սպառնալուծիւնները, ընդհարումները քրդական խմբերի եւ կառավարական զորքերի ու ոստիկանների միջեւ երբեք էլ չընդհատեցին: Թիւրքիան ստիպւած եղաւ մեծ քանակութեամբ զորքեր եւ արտակարգ դրութիւն պահել Արեւելեան նահանգներում, նիւթական ու բարոյական ահապին վնաս կրել, բայց քրդական պայտը չբժշկեց: Փաստն այն է, որ հակառակ թիւրքական աղբիւրներից բխող յերկրածոյ լուրերի, քրդական շարժումը մնում է կենդանի. երկրի զանազան կողմերում շարունակում են բորբոքել յեղափոխական օջախները, եւ եթէ մարում են մի տեղ, բռնկում են մի ուրիշ վայրում: Թիւրքերի կողմից կիրառուող բացառիկ միջոցները, աքսորները, արտաքսումներն ու անկախութեան դատարանները չեն կարողանում մարել սկսւած հողերը: Անգամ Արարատը, որի դէմ այնքան ուժ ուղղւեց եւ ուր այնպիսի արիւնահեղ կորուներ տեղի ունեցան, հակառակ թիւրքական բոլոր հաւաստիացումների, չի ընկճած վերջնականապէս եւ անընդհատ վրդովում է քեմալականութեան հանդիսոր: Արարատի ըմբոսանելը, որոնց վերջում միացին եւ թիւրքերի կողմից աքսորւած Սալըթ մոզայի մարտիկները, շարունակում են բարձր պահել Ձումշուղների, Բոսների ու Ֆէրզանդանների ձեռքով բարձրացած յեղափոխական դրօշակը:

Անհիմն չէ, անուշտ թիւրք կառավարութեան անհանդատութիւնը. ի զուր չէ, որ նա այնքա՞ն մեծ ուշադրութիւն ու ջանք է նւիրում քրդական ինդրին: Նա գիտակցում է շատ լաւ այդ ինդրի բոլորողական ահապանութիւնը թիւրքական տիրապետութեան համար, եւ աշխատում է, քանի դեռ ուշ չէ, չեզոքացնել վերահաս վտանգը: Կը յանդուրժէ նրան այդ, ի՞նչ ընթացք կը ստանայ քրդական ազգային շարժումը — կը պարզ է ապական: Մեր պարտականութիւնն է հետեւել նրան ասուլան նոյնպիսի լրջութեամբ, որպիսի լրջութիւն ցոյց է տալիս Բեմալ-Բամէթի թիւրքիան:

Նոյնպէս ուշադրութեամբ պէտք է հետեւել եւ թիւրքիայի արտաքին շարժումներին, թիւրք գիւնապիտութեան կանաքած քայլերին Եւրոպայի ու Ամերիկայի պետական ու դրամատի-

րական շրջաններում: Չպէտք է անտես ստնել այն իրողութիւնը, որ օգտւելով յետադարձութեան մարդկութեան բարոյական անկումից՝ թիւրքը կամաց-կամաց սկսում է մտնել «պատուաւոր մարդկանց» շարքը: Կոտորածներն ու վայրենութիւնները մոռացում են. քեմալական բարեկարգումները՝ զւրիշերական օրէնքներով ու եւրոպական դիւտարով՝ հեշտացնում են յանցաւոր խղճերի հանդարտեցման ճիգը: Հայկական ջարդեր.— այն երէկ էր, երբ սուլթանն էր նստած խալիֆաների դահլիճի վրա. նոր թիւրքիան քաղաքակիրթւել է, չի կոտորում: Ու թիւրքն ահա երևում է նոյնիսկ Լինկոլնի հայրենիքում. Ազատութեան Արձանի նիւ երբքի նաւահանգստում ողջունում է թիւրք պատուիրակների գալուստը: Ահ՞ որ թիւրքական հողից հայի արեւոր անհետացել է եւ տեղը քարիւղ է հասում: Ահ՞որ թիւրքական ոսկուց արեան հոտ չի գալիս...

Ի՞նչ տեց 1931 թվականը մասնաւորապէս հայ ժողովրդին: Բնականաբար, համաշխարհային տագնապը, որ հիւծում է բովանդակ մարդկութեան մարմինը, անդրադարձաւ եւ հայ ժողովրդի բոլոր հաստածների կեանքի վրա:

«Կարմիր գծից ներս»՝ Հայաստանի ու խորհրդային սահմաններում ապրող, աւելի ճիշտ է ասել, տոււալտող հայութեան մասին մենք խօսում ենք առանձին յօդւածով: Այնտեղ միութեամբ կան քիչ բան կայ ասելիք, դժբախտաբար. քայքայումը վերջին տարին անտանձնապէս մեծ համեմատութիւններ առաւ. արեւուկակ բռնութիւնը թագաւորում է սանձարձակօրէն: Ազատութեան, մարդկայնութեան, ազգային մշակոյթի, անհատական իրաւունքի ու տնտեսական բարեկեցութեան վերջին մնացորդներն էլ խորապակեցին. ժողովուրդը վերածւեց իրաւագուրկ ու ճորտացած բազմութեան, որի վզին նստած է Ստալինի կոյր կամակատար Հայկոմկոմի թեթեւաճիւղ եւ այլատերած մանկապետութիւնը, որ ահա քանի տարի անգլխօրէն քանում ու վատնում է երկրի կենսական հիւթերը:

Արտասահմանում, տարագրութեան բոլոր վայրերում, Քարիֆորնիայից ու Արժանախինից սկսած մինչեւ Շաւէլ-Արար ու Իրմապէնտ, հայ ժողովուրդն էլ ենթարկուց համատարած տագնապի դործած աւերին: Անգործութիւնը, նիւթական անձկութիւնը, ապրուստի, հացի ու երդիքի մտահոգութիւնները կլանեցին ամենքի ուշադրութիւնը: Արդային-հասարակական ուղղութեւր մի պահ կարծես երկրորդ տեղի անցան: Այդ պատճառով, առանձնապէս ցցուն հանրային երեւոյթներ. դժւար է ցոյց տալ: Երկու խօսքով՝ գաղութահայ աշխատաւորութիւնը ապրեց պայքարի տարի՝ պայքար հացի եւ ազգային գոյութիւնը տեսականացնելու համար:

Հայաստանի դռները շարունակեցին մնալ փակ գաղութաճայուսթեան առջև: Այնքա՛ն արմուկով սղղարարած ևւ յնպիսի անվերապահ համակրանքով ողջունւած ներգաղթը պարձաւ անիրիզճ հաւատաքննութեան ու սակարկութեան ատարկաց. հողի մի բուր մարդիկ կարելի եղաւ ճամբու դնել տարալ վերջը, այն էլ, ինչպէս պարզեց, հակառակ տւած խոստումի ու երաշխաւորութեան, բոլորովին անպարաստ վիճակի մէջ: Ամբողջ տարի գալութեայ գանդւածները շարունակեցին ապրել ու երողել Հայաստանը, և Հայաստանը երբևէ իրական ձև ու կերպարանք չտտացաւ նրանց համար, միշտ խուսափեց ու հեռացաւ, ինչպէս կապոյտ թռչունը՝ որոնողների աքի առջևից:

Իր ներսն էլ գաղութաճայութիւնը աւելի երջանիկ չեղաւ. անվերջ արժու ու իրարանցում, թայֆտյական վէճ ու եռանդի ապարգիւն վատնում, անհաշիւ տեղական ու հասարածական ծրագիրներ ու ձեռնարկներ ևւ ո՛չ մի խոչըր, համազգային դործ, որի շուրջը կրելի լինէր համախմբել ստեղծագործական բոլոր տարրերը: Բաժանւած երկու ճակատի վրա՝ խորհրդային ևւ ազգային, պառակուած ևւ իրերամերժ՝ գաղութաճայութիւնը այս տարի էլ չկարողցաւ երեւան գալ մէկ լարւած ձիգով, համազգային բնդհանուր ճակատով: Անգամ անասական տազնապն ու գործազրկի թիւերը, որ հայի համար ազգային աղէտի ընթացիկ առաւ, բնդունակ չեղաւ փոխելու նեղայրամերժ ոգին: Գործադուրկների նպաստի գործն իսկ ստացաւ կուսակցական ու հասարածական կերպարանք:

Պէտք է տեսլ, սակայն, առանց ինքնապայութեան, որ միակ կազմակերպութիւնը, որ ամբողջ տարի անընդհատ հնչեցրեց ազգային ուժերի համախմբան ու համագործակցութեան պահանջը, մեր կուսակցութիւնն էր՝ Հ. Յ. Դաշնակցութիւնը: Մեր մամուլը անվհատ ցոյց տւեց գաղութաճայութեան սպառնացող վտանգը, պարզեց ինքնագործունէութեան ևւ միութեան անհրաժեշտութիւնը, ներկայացրեց ծրագիրներ ու գործունէութեան աւելի բանաւոր էղանակներ, վեր հանեց սիրող կացութեան կործանարար հետեւանքները, համերաշխութեան աղբու կոչ արաւ, բայց նրա ձայնը մնաց ձայն բարբառոյ յանպատի: Շփոթելով հայրենիքը իշխանութեան հետ՝ պահպանողական ազգային տարրերը գերադասեցին մնալ բուլշևիկների բարեկամի դերում, իրենց աղբղերով աջակցելով նրանց քայքայիչ ծրագիրների իրագործման, ու չուզեցին լծւել գաղութաճայութեան կազմակերպութեան ու ազգային շինարարութեան դործին:

Այդպէս չվերաբերեց, սակայն, ժողովրդական լայն գանգաճը, որ անցեալ տարի էլ ապրեց կապւած կենդանի կապերով իր հարազատ կուսակցութեան հետ: Հ. Յ. Դաշնակցու-

թեան ժողովներն ու ձեռնարկները շարունակեցին մնալ հայ աշխատուարութեան դուրուրանքի ասարկան: Երիտասարդութիւնը շարունակեց խուսն բազմութիւններով մանկ Դաշնակցութեան շարքերը: Դաշնակցութեան գազափարախութիւնը շարունակեց գոնուարել ևւ եռանդ ու ախիւ ներշնչել հայ կենսերին: Դաշնակցական մամուլը շարունակեց զեկափորել հանրային կարծիքը: Դաշնակցութեան գործունէութեան շուրջ կենդանի մնաց հանրային հետաքրքրութիւնը: Ինչպէս այնպիսի, Հայաստանում, Մորհրդային Միութեան բոլոր կողմերում, մինչև Թուրքեստան, մինչև Միւրիի տալլաներն ու մինչև Սոլովիլի, տարագրութեան ամբողջ տարածութեան վրա ևւ չ. Յ. Դաշնակցութիւնը շարունակեց մնալ քաղաքակրթութեան ու պարզ, Հայաստանի ու հայ ժողովրդի ազատութեան տենչացող, ազգային ճիգերը հաւաքելու ևւ գործունէութեան մղելու ձգտող միակ կենդանի ոյժը:

Ի՞նչ յոյսերով, ազգային - բաղաբական ի՞նչ ակնկալութիւններով ենք ոտք կոխում նոր տարին: Ի՞նչ սպասումներ ունինք 1932 թականից:

Աշխարհի հորիզոնը շատ է պղտոր, հեւանկարներն՝ անորոշ: Գուշակութիւնների համար հող չկայ բնաւ: Չնայնդ, ուրեմն, ապագայի վարազրջի յետեր ու քայլերք մեր ճամբան՝ ուղեցոյց ունենալով մեր այնքան փոթորիկներ տեսած դրօշակը, որի վրա արձանագրուած է լուսաւոր տատերով -

Ապաստութիւն Հայաստանի բուլշևիկական լծից: Իրականացում հայաստանի անկախութեան ևւ ամբողջացման:

Անվհատ ևւ լայն ճակատով պայքար ընդդէմ թիւրք բռնակալութեան, մինչև որ իրականանայ հայ ժողովրդի ազգային ուխտը: Չեռք ձեռքի ու համերաշխ բուր այն ճնշւած աղբերի հետ, որոնք նայնպիսի ձգտում են ազատել թիւրքական լծից: Անդու ու յարատեւ գործունէութիւն թիւրքական բուրք ճակատներում:

Ապագային ուժերի համախմբում գաղութներում՝ Հայաստանի օժանդակութեանը հայ ժողովրդի բաղձանքների իրականացման, որտտասահմանի տարագրի բազմութիւնների հաւաքական պայութեան ապահովութեան, ամբապնդման ու դարգացման համար: Համերաշխութիւն բուր կենդանի ու գործուն հոսանքների ու տարրերի:

Ի՞նչ կը պատահի, ո՞ր կը տանեն մեզ արտաքին դէպքերը - դժար է մարդաբէանալ. բայց հեշտ է ըմբռնել, որ մեր ուժից ու կամեցողութիւնից շատ բան է կախում: Կամենանք, ուրեմն: Շարունակենք անվհատ ու յարատեւ պայքարել: Պայքարի մէջ է մեր փրկութիւնը:

# ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԸՄԲՈՆՈՒՄԸ

Թէև հայկական գաղթյալներին մէջ երկար տարիներէ ի վեր կը դործին քաղաքական մէկէ աւելի կուսակցութիւններ, որոնց կոչումին, բնոյթին, գործունէութեան եղանակին ու կազմակերպական իւրաքանչեւ ձևերուն մասին բերանացի ու գրաւոր դաստիարակչական խոշոր աշխատանք է կատարւած, թէև արտասահմանի գլխաւոր կեդրոններուն մէջ համախմբւած մտաւորականութիւնն ու փամուլը շեշտւած կուսակցական դիմադրի են արտաբերած և հայ տարազերը գլխաւորաբար կուսակցական բեմէն է լսած հայ խօսքը, այսուհանդերձ տակաւին կայ մտքերու մէջ, և որոշ խաւերու մօտ տիրական է, չփոթը կուսակցականութեան ըմբռնումին մասին:

Մասնաւորաբար անոնք, որոնք կապրին եւրոպական ու ամերիկեան միջավայրերու մէջ, ամէն օր դիտելով իրենց անմիջական շրջապատի հանրային իրազարմութիւնները, կը փորձին նմանութեան գիծեր փնտռել մեթ և զբոյի աշխարհին մէջ գործող քաղաքական ուժերուն միջև, կը մեկնաբանեն մեր կենցաղի երևոյթները օտար շրջապատի լոյսով, մեր քաղաքական կազմակերպումը՝ օտար հոսանքներու կաղապարով: Եւ գտնելով յաճախ գարտուղութիւն, զուգահեռականութեան պակաս, կը մատնեն մտաւոր վարանոսի:

Կուսակցական ծրագիր-կանոնագրի, գործելակերպի և ընկերային կազմի վերաբերմամբ մեր և արևմտեան երկիրներու կուսակցութիւններուն միջև գոյութիւն ունին էական տարբերութիւններ: Մէկ կողմ թողով կոմունիստները, որոնք իրենց աշխարհայեացքով և կազմակերպական եղանակով հոյակապ կուսակցութիւն չեն, և ուսկալարները, որոնք այսօր քաղաքական կուսակցութիւն ըլլալէ զաղբած են և վերածուած են ապաքաղաքական խմբակցութեան մը, ինչպէս նաև հնչականները, որոնց անունը կայ, բայց իրենք չկան, եւ կանգ կանոնեմ Դաշնակցութեան՝ իբրև միակ հայկական փաստական կուսակցութեան՝ քանի մը ստանձնաշատուկ կողմերուն վրա, զանոնք համեմատութեան դնելով արևմտեան կուսակցութեանց յատկանշական կողմերուն հետ:

Որպէսզի հնարաւոր ըլլայ յստակ պատկերացնել երկու կողմերու կերպարանքը, անհրաժեշտ է նախ և առաջ նկատի ունենալ հետևեալ երեք նախադրեալները:—

1) Արեւմուտքի կուսակցութիւնները կը դործեն անմիջականօրէն այն միջավայրին մէջ, ուր կեանքի կոչւած են իրենք, մինչ Դաշնակցութիւնը, ծնած և գործած ըլլալով հանդերձ հայրենիքին մէջ ու հայրենիքին համար, այսօր կապրի ու կը գործէ տարազւորութեան մէջ:

Բնական միջավայրի՝ հայրենիքի մէջ ծնող, գարգացող և գործող արևմտեան կուսակցութիւնները բաց, խորհրդարանական խմբակցութիւններ են, որոնց

պայքարը կրնանայ օրինական, բարբոս կողմէ ընդունուած դետնի վրա: Ասոնք կը վայելեն օրէնքի պաշտպանութիւնը կամ պետական հեղինակութեան հովանաւորութիւնը, կը կիրարկեն քաղաքացիական իրաւունք-պարտաւորութիւններ: Իրենց գործունէութեան գլխաւոր ելակէտն է հասնել իշխանութեան, օրէնքի արտօնած ճանապարհով:— քէի միջոցաւ: Ժողովրդավար երկիրներու մէջ երբեմնակի տեղի ունեցող պետական հարածները կամ նման բուն ուժի կիրարկումները կուսակցութիւններու բնականոն գործառնութեանց մէջ չեն մտնել և օրէնքի դուրս երևոյթներ են: Կուսակցութիւններու գործն է մղել խօսքի և գրչի պայքար, տարածել, ստարացնել հետևորդներու և համակիրներու շրջանակը, ուժ կուտակել, տիրանալու համար քէի և քէի կամուրջով բարձրանալու դէպի իշխանական աթոռները:

Մեզ համար կեանքը տարբեր կերպով է դրած խնդիրը: Դաշնակցութիւնը, իբր գործն Փիղիբակեան ոյժ, դուրս է բնաշարահէն. և, ներսն ալ, տիրող վարչակարգի տակ հնարաւորութիւն չունի և չէ ունեցած մասնակցելու երկրի ընկերային-քաղաքական կեանքի ընթացքին: Նա քէ համախմբող մեքենականութիւն չէ: Իշխանութիւնը գրաւելը էական մղում չի հանդիսանար: Նա լեզալ չէր երէկ, համոններու կամ ցարբու լուծերուն տակ: լեզալ չէ նաև այսօր, խորհրդարային սանձարձակութեան օրով:

Եւ որովհետև զբոյի հայութիւնը ունի, բացի քաղաքականէն, կարգ մը հրատապ մտահոգութիւններ՝ մշակութային, հայապահպանման, հայահաւաքման, դաստիարակչական ևն., ուստի Դաշնակցութիւնը, մէկ կողմէն կը տանի հայրենիքի քաղաքական պահանջներու բեռը, միւս կողմէն կամայ սկամայ եռանդ կը սպառէ և նոր միջավայրերէն բխող վերոյիշեալ հրամայականներուն վրա:

2) Արեւմուտքի կուսակցութիւնները, գործի լըծւած ըլլալով արդէն իսկ կազմակերպւած, քաղաքականօրէն կաղապարւած հայրենիքներու ծոցին մէջ, կատաշաղբեն ո՛չ թէ ստեղծագործական, այլ բարենորոգչական պահանջներ: Ուրիշ խօսքով՝ շեղածը կեանքի բերելու և ձեւաւորելու կոչումը չունին, այլ եղածը պահպանելու կամ բարելաւելու մտահոգութեամբ կը սնանին: Դաշնակցութիւնը շեղածը ստեղծելու, նախ հայրենիքը ձեռք ձգելու, պետութիւն ունենալու և յետոյ միայն բարելաւման, զարգացման ձգտելու կոչումը ունի:

Կազմաւորւած հայրենիք, օրէնքի ուժով ամուր խարսխւած պետութիւն ունենալ, և պետութեան ուժով ալ արտաքին վտանգներու դէմ պաշտպանուած ըլլալը արեւմտեան կուսակցութիւններուն հնարաւորութիւն կընծայէ, որ իրենց գործունէութեան թափը կեդրոնացնեն ներքին կեանքի երևոյթներուն վրա: Անոնց համար պայքարի ճակատը ներսն է և իրաւական

նախադրանքներով ճշտորոշում: Ժողովրդական դանդաղանքներու մէջ խօսքով ու մտմուրով, պետական հունի մէջ խոչընդոտարաններու մտքոնէն կը թափին աշխատանք, որպէսզի կտտովարութիւնը այսինչ կամ այնինչ վարքագիծը տանի և սա կամ նա օրէնսդրութիւնը անցնէ: Պայքար խաղաղ հունի մէջ է: Վերջինի խօսքը կը վերադրի քէին:

Դաշնակցութեան համար այսպէս չէ իրականութիւնը: Քահի որ Հայաստանը կը գտնուի օտար բռնագրաւման տակ և հայութիւնը նստած չէ իր պետական ինքն ինքն կեանքը, Դաշնակցութեան առջև ծառայած է ու կը ծառայայ մտնէն առաջ օտար բռնագրաւման տարիները գործա ջըլու առաքելութիւնը: Եւ որովհետև անտառ ազգերը հայրենիքը պարզ և չեն ստանար, այլ կրանեն ուսով, արհեստով ու կուրով, ուստի Դաշնակցութիւնն ալ ամենէն առաջ հանդիսացած է ու կը մնայ յեղափոխական կուսակցութիւն: Բոնասիրող պետութեանց աչքին ազօրինի, թշնամի խմբակցութիւն է ան, որուն դէմ գնէք ու դորարանակ պատրաստ ան շարժելու: Անբնականոն, տրամաբանութեան ու առողջ մտածողութեան հակառակ երևոյթ է ոչ-յեղափոխական կուսակցութիւններու գոյութիւնը մեր մէջ: Կարելի չէ ըմբռնել ունէ կուսակցութիւն հայ կեանքի մէջ, որ մերժէ յեղափոխական բնոյթ կրել, որքան հայրենիքը ազատագրած չէ և հայ մարդու զիրար որպէսբարը արտաքին ճակատի վրա է: Մինչև ազատ Հայաստանի իրականացումը՝ պատմութիւնը ճակատագրական անխուսափելի դատանիք է դրած ունէ հայ կուսակցութեան վրա ըլլալ յեղափոխական, մարտնչող բանակ: Այս իսկ պատճառով առկա վարքերն, օրինակ, կուսակցութիւն չեն: Ըստ էութեան, պայքարը հայութեան և արտաքին բռնատիրութեան միջև չի կրնար և երբք չէ տարած խաղաղ, օրինական միջոցներով, այլ միայն յեղափոխական զենքերով:

Ի հարկէ, արեւմուտքի կուսակցութիւններու մէջ ալ կան այնպիսիները, որոնք յեղափոխական բնոյթ կը կրեն, ինչպէս յեղափոխական ընկերակազմները, կոմունիստները և ի. ս. Բայց մեծ տարբերութիւն կայ այսպիսիներու և Դաշնակցութեան միջև: Անոնք յեղափոխական են երկրի ներքը որք կարգեր փոխելու կամ օրան կառավարողները հետանցնելով պետութեան ղեկը գրաւելու մտքով. անոնք յեղափոխութեան ճակատը ամբողջովին ներսն է: Դաշնակցութեան պայքարի ճակատը դուրսն է: Մեր առջև ներքին պետական վարչաձև փոխելու կամ մէկ դասակարգի տեղ ուրիշ մը իշխանութեան գլուխ զնելու ինչդիր չկայ այսօր: Քէ, խորհրդարան, Ժողովրդավարական կարգ ու սկզբունքները դէր չեն խաղար: Երևուստք դիրքերը ճշտորոշում ևս չազդապաշտ են, ուր անապառ պայքար կը վարել գործա ջըլու անհարազատ իշխանաւորը իր հայրենիքէն:

3) Արեւմուտքի կուսակցութիւնները կազմակերպւած են դասակարգային շերտաւորման հետեանքով և արտայայտիչն են իւրաքանչիւրը իր խաւի շահերուն: Դասակարգային հակամարտութիւնը չէ որ առանձնապէս ծնունդ տւած է Դաշնակցութեան և ոչ ալ մասնակի շահերու հետապնդումը կը կազմէ այսօր անոր առաքելութիւնը:

Եւրոպայի կամ Ամերիկայի բոլոր պահպանողական-պատական կուսակցութիւնները ուրիշ բան չեն, և թէ ոչ տիրող դրամատիրական դասերու պատգամախօսը, իսկ ընկերակազմական և այլ ձախ կուսակցութիւնները՝ աշխատաւորական խաւերու՝ բանւորական, գիւղացիական, արհեստաւորական և ի. ս. Անոնք համար հայրենիքի ընդհանրական շահէր գոյութիւն ունին կամ ստորեայ քաղաքականութեան կրիչն կը մտնեն այն ատեն միայն, երբ պատերազմ կայ կամ նման անբնականոն կացութեան մը առջև կը գտնուի երկիրը: Ատիկ գործս՝ խաղաղ և սոյորական ժամանակներու մէջ դեր կատարողը, մղում տուող դասակարգային շահի շարժառիթն է: Ընդհանրական շահի հողը պետութեան ուսին է. կուսակցութիւններու գործն է մասնակի շահերու հետապնդումը: Կուսակցութիւնը կը դառնայ ընդհանուր պետական ազգակ, երբ կանցնի իշխանութեան զուտը:

Այս պատճառով է, որ ընկերակազմական և այլ ձախ հոսանքներու մէջ խոսացած են առանկապէս բանւորները, արհեստաւորները, գիւղացիները, մտաւորականները և նման ընչազօրէի տարբեր, իսկ պահպանողական հոսանքներու հետ կը քալեն դրամատէրներ, առևտրականներ, կալաւատատէրներ, արքիւսաբերողներ և նման սեփականատէր տարբեր: Ենթաւորումը գլխաւորապէս կը բերի իւրաքանչիւր անհատի ընկերային դիրքէն, թէ և կը պատահի որ գաղափարախօսական շարժառիթներով մէկ դասակարգի պատկանող անհատներ երբեմն ինքան ընկերայնօրէն իրենց հակադիր դասի կուսակցութեան մէջ: Այս բացառութիւնը ընդհանուր երևոյթ է փոխեր:

Դաշնակցութեան համար այսօր մասնակի շահերը չեն հականք, որքան ընդհանրական հայրենիքը ձեռք ձգւած չէ: Անոնք հետագային միայն պոյի հանդէս դան: Այսօր ընդհանրական, համայն հայութեան, բոլոր խաւերու շահի ինչդիրն է դրած: Ապագային՝ հայութեան իր ազատ երկրի մէջ ստացած շերտաւորման գրգռնից Դաշնակցութիւնն ալ կը կանգնի իր աշխատաւորական դասի շահերու պաշտպանութեան գլուխին:

Այս պատճառով է որ մեր կուսակցութեան ընկերային կազմին մէջ սկիզբէն ի վեր եղած են և կան դանպան խաւի մարդիկ, որոնք միացած են դաշափարի կազմերով. և այս հանգամանքը ոչինչով վնասած չէ կուսակցութեան ոչ ոքիին, ոչ գործին, ոչ ալ կերպարանքին:

Հայ բուլշևիկներու աշխարհաքաղաքացիութիւնը կամ հայկական ընդհանրական շահերու ժխտումը մէկ կապկումն է առևտրական բուլշևիկի այն սխալ գծին, թէ բանւորական շահերը համամարդկային բնոյթ կը կրեն, ոչ ազգային: Չկայ դասակարգային շահ հայրենիքի ընդհանուր շահէն անկախ. թէ՛ դրամատիրական և թէ՛ բանւորական խաւերու շահերը սերտօրէն ազուցւած են հայրենիքի ամբողջական շահերուն հետ: Բանւորական կամ դրամատիրական շահ համամարդկային բնոյթով գոյութիւն չունի:

Վերի երեք տւեանները ըստ էութեան կը պարզեն այն նախադրեանքները, որոնց տակ կը գործեն արեւմտեան կուսակցութիւնները իրենց երկիրներու մէջ և

Դրանակցութիւնը՝ Հայ կեանքի մէջ: Այս տեսանկերը որոշ չափով կը պարզեն մեր կուսակցութեան առանձնայատուկ կերպարանքը և նշմարելի կը դարձնեն միաներէն գարտորոշող գիծերը: Դրանակցութեան իւրայատուկ կերպարանքը կարտայայտի իր ա) կոչումին, բ) բնոյթին, գ) գործունէութեան եղանակին և զ) կազմակերպական ձևին մէջ:

Դրանակցութիւնը, ըլլալով ամենէն առաջ Հայաստանի ազատութեան ծառայող ոյժ, ապրած է ու կը շարունակէ ապրիլ բարոյական խտտակեաց մթնոլորտի մէջ, երևան բերած է անձնորայութեան, անհաճարկողութեան, հակաբերութեան, բարձր իղէալիզմի ծով առաջինութիւնները: Կուռի մտնելով արտաքին թըշնամիի դէմ, ինքը չի կրնար այդ կուռիէն անձնական կամ խորացական շահ հանել, ինչպէս գինորը չի կրնար անձնական շահ կերտել պատերազմի դաշտին վրա, այլ միայն կը ծառայէ: Ան միայն կը քրտնի, կը չոզի, կարեւրի. ամէն ինչ կուտայ անոնց ոչինչ ստանալու:

Արեւմտեան կուսակցութիւնները, ամենէն զաղափարականներն անդամ, իրենց պայքարէն անմիջական օգուտ կը ձգտին հանել: Ղեկավարները հասցնել իշխանական բարձր աթոռներու, շարքայիններէն շատերը դետոզէն Գաղափարական զանազան սրալստեատուներու մէջ, վերջապէս՝ պետութեան կտորը վարել այնպէս որ ամենէն շատ օգուտը ստանան իր բարեկացուցիչ ու յենարան խաւը: Դաղափարականութեան, այլախիտութեան, մարդկայնական բարձր ապրումներէն աւելի սեփական շահի դիտակէց մղումն է, որ կուսակցութիւնը եւրոպացի կամ ամերիկացի քաղաքացիի մտնելու իրեն համապատասխան կուսակցութեան ցանցին մէջ: Իսկ զանակցականին մղումը՝ զուտ գաղափարական է, անանձնական. ինքնուրացութեան թելէջն է խանդավառողը:

Եւ որովհետեւ գործը, ուխտը յեղափոխական բնոյթ ունին, հետևաբար զանակցականին տիրական դժերն են զաղտնապահութիւնը, շարքայութիւնը, ներքին եղբայրասիրութիւնը, կարգապահութիւնը: Արեւմտեան երկիրներու կուսակցութիւններուն համար ատենք երկրորդական արժէքներ են: Օրինակ՝ Ժիժադէլի կամ այլանուկ չափով՝ ըլլար, եթէ Մ. Լաւանդներու հանրապետական կուսակցութիւնը իր նիստերը թաղէր թանձր զաղտնապահութեան մէջ: Ընդհակառակը, ան բարձր կազմակերպչ, ամէն անկիւն կուզէ թափանցել իր որդաւմներով, մասով և բեմ կողողէ, որպէսզի Ժողովրդական զանգաւածներ փայլուն տեսնեն իր դէմքը և, ի վերջոյ, իրեն քէտրակեն: Կամ երբեք կարելի՞ է, որ անգլիական Աշխատաւորական կուսակցութեան կեդրոնական մարմին անդամները անյայտ պահուին կամ անոնց Ժողովները խիտ ու անթափանցելի վարպետայիններու ետև սարքին: Մինչ Դրանակցութեան Ժողովները միշտ ստորերկրեայ հոտ ունին և աւանդական կարգով Բիւրօի կազմը պիտի անյայտ մնայ նոյնիսկ շարքայիններուն:

Դրանակցութեան գործունէութեան եղանակն ալ ունի արանձին ձև. ստորերկրեայ աշխատանք, դիտող ու հետևող արտաքին աչքերէն ծածուկ, խուսափող յորձեղակերպ: Ան չէ կրցած ու չի կրնար դուրս աչ-

խարհ դալ բովանդակ թափով ոչ նախապատերազմեան շրջանին, ոչ ալ այժմ: Սուլթանի անհամար բռնութիւնն ու կախաղանները, ցարի աքորներն ու դատարանները, բոլշեիկներու զինակահարութիւններն ու անանուն սարսափները կը ստիպէին, որ հայրենիքին մէջ դեռնի տակ ճիւղաւորի ան, առանց կարենալու ամբողջական հասակով հրապարակ նետելու: Բացի ոռու յեղափոխական կուսակցութիւններէն, արևմտեան երկիրներու կուսակցութիւնները այսպիսի զոյսփճակի առջեւ դատած չեն ինքզինքնին:

Այս պատճառով ալ արևմտեան ունէ կուսակցութեան դուռը լայնօրէն բաց է համակողջ քաղաքացիին առջև: Ան անընդհատ ելևմուտ կրնէ մէկէն միւսը. ցուցակ, ամսատուրք, կուսակցական պատկանելութեան խիստ ցնդի և նման գրութիւններ արժէք գուրկ են:

Դրանակցութեան դուռը չի կրնար կոնակի վրա բաց պահել. ընդհակառակը, նա միշտ պարտաւորւած է գտնուի ենթարկել իր կազմը, ցուցակ պահել, ամսատուրք դանձել, վատը վանել: Բերեղանալ ու խոտանել, սղորոր խափանել ու տակը պահել շիտակը, վստահելին, ամուրը: Հայ կուսակցականը պարտաւորւած է անընդհատ նստիլ Ժողովի, նիւթական ու բարոյական պարտաւորութիւններ ստանձնել, արամադրել դրամ, Ժամանակ, հանգիստ՝ առանց փոխարէնը ունէ բան ստանալու:

Ըստ կազմակերպական ձևի՝ Դրանակցութիւնը գինորութիւն է, պտտրատ շարժելու առաջին իսկ կողին: Եւ ինչպէս բանակ՝ առաջնակարգ նշանակութիւն ունին ներքին ներդաշնակութիւնը, պողպատեայ կարգապահութիւնը: Ուխտ է, որ երբեք չենք ամբողջապէս տրամադրւած են սրբազան գործին: Այս պատճառով անկախութեան, ռամկավարական սկզբունքներու անուշով ընդհանուր ներդաշնակութեան վնասող տարանջատմանը գոյութեան իրաւունք չեն կրնա ունենալ: Մերակուսական Պօրա մը կամ Չըբէլի մը իբր անկախ կուսակցականներ իրենց պատկանած կուսակցութիւններու ծոցին մէջ հասկնալի են արևմուտքի մէջ: Դրանակցութեան ծոցին մէջ Պօրաի կամ Չըբէլի մը ներկայութիւնը անիմաստ է:

Տիրական կարգը այնպէս է որ ամէն ոք պիտի չնչէ կուսակցութեան ներս տեսակ մը ճգնաւորական մթնոլորտ, խտտակցութիւն, առաջինի վարք, պատրաստակամութիւն, ընկերասիրութիւն, սովորութիւն. մէկ խօսքով՝ մարտական ճգնաւորութիւն:

Այս ներքին բարոյականութեան դերն ու նշանակութիւնը անհրաժեշտ է ընդդէմ կարենալ պարզ ըմբռնելու համար Հայ յեղափոխական շարժման երևան հանած այնքան զմայլելի որակները և այն անվերապահ, ինքնուրաց, կյանքի անձնաբերութիւնը, որով սողորւած բիւրաւորներ դիմադրուեցին մահը անտրտունջ, յօժարակամ, յանախ հոգեկան արբըռանքով ու խանդավառութեամբ:

Առաջները, երբ Դրանակցութիւնը, թէ՛ իբր գաղափար և թէ՛ որպէս կազմ ու գործուն ոյժ, արմատացած, ճիւղաբաժնակա՞ծ էր երկրի մէջ, իր բնոյթն ու կերպարանքը կը պահէր անյեղի: Երջապատի բռնակալական կարգերը, թէ՛ արևելեան և թէ՛ արևմտեան Հա-

յատասններու մէջ, կը սատարէին խտացներու, աւելի պայծառացնելու անոր դիմագիծը: Ներքին բիւրեղ, կրու յատակութիւնը կը մնար անվթար ու անըդհատ կը շէշուէր: Այժմ, իրերու բերումով, իբր յեղափոխական գործօն կազմ, ան ժամանակաւորապէս տա-

րազրւած է Երկրէն և ենթակայ է դրո՛ւ խորթ, անհա-րադատ ազդեցութիւններուն: Մեր, տարազիր ընկեր-ներուս պարտքն է ամենէն առաջ և ամէն տեղ անա-դարտ պահել մեր կուսակցութեան գաղափարական ու բարոյական դէմքը:

ԱՍՍՏՈՒՐ

## ՄԱՐԲՍԻՉՄԻ-ԼԵՆԻՆԻՉՄԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ

«Բո՛րժուա-ազգայնական» դիտութեան և մտաւորականութեան դէմ սկսած հարածանքը Հայաստանում հետզհետէ սկսում է բնիւ իր պտուղները: Որոհըդացին իշխանութիւնը ո՛չ մի միջոցի առաջ կանչ չի առնում արժատարիլ անելու համար «Տին կարգի» մատուցողները: Վերջին բայրը այս ուղղութեամբ պէտք է համարել Գիտութեան և Արւեստի Ինստիտուտի հաշ-ւեյարարն ու Մարքսիզմ-Լենինիզմի Ինստիտուտի կազմակերպիչը:

Գիտութեան և Արւեստի Ինստիտուտը, 1930ին մերակազմւած Գիտութիւնների Ինստիտուտի, Հայաստանի բարձրագոյն պետական հաստատութիւնն էր, որի անդամն՝ ըի շարքին կային Թամանեանի, Կամարակա-նի, Արշիւանի, Աճառեանի, Մանանդեանի նման որս-կեայ աւարականներ: Նրա մէջ ու շուրջը տիրում էր որ: Գիտական հետազոտութիւն: Նա մի կենտրոն էր, ուր տեղի էին ունենում գիտական փորձեր և ուսում-նախրութիւններ: Նրա անդամների և աշխատակիցնե-րի միջոցով կատարւում էին երկրի բնական հարստ-թիւնների, ազգաբնակչւմ, հնագիտական ու պատմա-կան պայմանների հետազոտութիւններ: Մի խօսքով, բարձրորակ և արժէքաւոր հաստատութիւն էր Ինստի-տուտը: Հիմա այդ հաստատութիւնը փակւած է և տե-ղը ղեկավարներից բացառել է բարձրագոյն գիտական հաստատութեան մի ծաղրանկար:

Ի՞նչ նպատակներ պիտի ծառայէ այս նոր հիմնա-րկութիւնը: Հայկովուտի Կենտրոնի քարտուղարու-թեան որոշումը այսպէս է ձևակերպում նրա դերը-«Մարքսիզմ-Լենինիզմի Ինստիտուտը Հայաստանում՝ պէտք է հանդիսանայ այն կուսակցական-գիտական կազմակերպութիւն-հաստատութիւնը, որը կըշտւած է անողոք կռիւ մղելով կուսակցութեան դէմք կողմ ա-մէն տեսակի թէքումների և արուաւորմների դէմ մի կողմից, և միւս կողմից սխտեմատիկ և խորացրած պայքար վարելու հակադեմոկրատիկան Դաշնակցու-թեան, մեծապետական նացիոնալիզմի, որպէս գլխա-ւոր վտանգի ազգային քաղաքականութեան բնազաւա-ռում, և տեղական նացիոնալիզմի ու ընդհանրապէս ամէն տեսակի հակապրոլետարական և հակայեղափո-խական իդէոլոգիաների դէմ յանուն մարքսիզմ-լենինի-զմի անապարտութեան և սոցիալիզմի գործի յազմա-նակի» («Ձ» - 2», 5 դեկտ. 1931):

Ուրիշ խօսքով, Դաշնակցութեան դէմ պայքարելու համար հիմնւում է ամբողջ մի Ինստիտուտ, և այն էլ վաղուց արդէն «Իրկիդացիաի ենթարկւած», քանիցս

մեռած ու թաղւած Դաշնակցութեան դէմ: Վա՛տ չէ... Ըստ Հայկենտրոնիզմի կողմից հաստատւած կա-նոնադրութեան՝ («Ձ» - 2», 23 դեկտ. 1931) «Մարք-սիզմ-Լենինիզմի Ինստիտուտը Հայաստանի Սոցիա-լիստական Որոհըդացին Հանրապետութեան բարձրա-գոյն գիտա-հետազոտական հիմնարկութիւնն է», (յօդ. 1):

«Յօդ. 3. Մարքսիզմ-Լենինիզմի Ինստիտուտի խըն-դիրներն են.

«ա). Մարքսիստական և լենինեան աշխարհահայ-եացի ենթարկել իդէոլոգիական ամբողջ Ֆրոնտը, գի-տութեան բոլոր բնագաւառներում, անողոք պայքար մղել հակամարքսիստական և հակալենինեան ուղղու-թիւնների դէմ, պայքարել մարքսիզմի և լենինիզմի ա-մէն տեսակի աղաւաղումների դէմ.

«բ). մշտել սոցիալիստական շինարարութեան գործնական պրոբլեմները և պարտադրել նրա համար բարձրորակ մասնագէտների կոմունիստական կադրեր»,

«գ). իրագործել ՀՍՄՀ ահմաններում բովանդակ գիտական աշխատանքի գիտական մեթոդոլոգիական միասնական ղեկավարութիւնը.

«դ). ուսումնասիրել ՀՍՄՀ, և Անդրկովկասի բնա-կան-արտադրական ուժերը.

«ե). ուսումնասիրել ՀՍՄՀ ժողովրդական տնտե-տութեան սոցիալիստական դարգացման վերաբերեալ բոլոր հարցերը (արդենաբերութեան և գիւղատնտե-տութեան վերանաուցում, մասնագիտացում, չըլա-նացում և այլն):

«Այս նպատակների իրականացման համար Ինստի-տուտը ուժեր է պատրաստելու, հրատարակութիւններ է անելու, խորհրդակցութիւններ, համագումարներ և այլ կարգի ժողովներ է հրաւիրելու և այլն:

«Յօդ. 5. Ինստիտուտը բաղկացած է հետևեալ սեկցիաներից.

«ա). Մարքսիզմ-լենինիզմի փիլիսոփայութեան սեկցիա.

«բ). Տնտեսական գիտութիւնների սեկցիա.

«գ). Բնական գիտութիւնների սեկցիա.

«դ). Պատմական գիտութիւնների սեկցիա.

«ե). Գրականութեան և արւեստի սեկցիա.

«զ). Մարքսիստական մասկարաութեան և ման-կավարժութեան սեկցիա »:

Ինստիտուտի ընթացիկ աշխատանքները կատարւե-լու են այս սեկցիաների միջոցով:

Ինստիտուտը կազմւելու է իսկական անդամներից,



և աշխատակիցները: Վերջիններս առաջարկելու են սեկցիաների կողմից և հաստատելու են վարչաժխտները:

« Յօշ. 8. Ինստիտուտի իսկական անդամ կարող է լինել Խորհրդային Միության ամէն մի քաղաքացի, եթէ նա ընդունում է մարքս-լենինեան օրթոդոքսի, իրէնդիան, ունի մարքս-լենինեան ուղղութեան լուրջ աշխատութիւններ, կամ թէ սոցիալիստական շինարարութեան և մարքս-լենինեան աշխարհահայացքի պրոպագանդայի ասպարեզում մասուցել է յատուկ ծառայութիւններ »:

Իսկական անդամների սկզբնական կազմը որոշում է Հայկենտգործկոմից, իսկ յետոյ՝ ընդունւելու է անդամների ընդհանուր ժողովով՝ սեկցիաների առաջարկութեամբ: Ընդհանուր ժողովն է և անդամութիւնից հեռացնողը՝ վարչութեան առաջարկութեամբ:

Ինստիտուտը ղեկավարւելու է տեսչի, գիտական քարտուլարի՝ նախագահութեան կողմից: Առաջին տեսչ նշանակւած է Հ. Գիւլքեցիովեանը, գիտական քարտուլար՝ Մուշեղեանը և նախագահութեան անդամներ՝ Գուրոյեանը, Յ. Յովհաննիսեանը, Դր. Միսոնեանը, Մեղիքեանը, Ալոյշեանը, Յ. Զօրեանը, Առլանեան, Տ. Մուշեղեանը և Կ. Դադարեանը:

Հետաքրքրական է, ինչո՞ւ է գրադելու սեկցիաները:

Դիւլեկտիկական և պատմական մատերիալիզմի սեկցիայի պաշտօնն է լինելու՝ փանդոք և սիստեմատիկ պայքար մղելով աջ թե՛քման մեթոդաբանութիւնի, մեխանիցիզմի և դերտրիստեան մենշելեկող իրէպլիզմի դէմ... Գաղտնի տալ և խորացնել փիլիսոփայութեան լենինեան էտայի խնդիրների ուսումնասիրութեանը»: Մասնաւորապէս, ճառարարկ խնդիր է հակախառնալու, դիւսած դիւլեկտիկական մատերիալիզմի դէմքով, անխնայ մեղակցելով Դաշնակցութեան զարգացման օրոշութեան և մատողութեան բոլոր հակադիտական բնոյթը »: «Մարքս-լենինեան խորացումը քննադատութեան ենթարկելով Դաշնակցութեան, սպեկըֆիզմի ինչպէս անցեալի, նոյնպէս և ներկայիս «փիլիսոփայութիւնը»՝ կապելով այն այդ կուսակցութեան վարած քաջայայտ բուրժուական քաղաքական վարքագծի հետ... «Արեւիկայ հաստատելով Հայաստանի Մարտնչող Անաստեանների Ընկերութեան հետ և աջակցել նրան՝ աւանմուսկի ուշադրութիւն դարձնելով հակակրօնական պրոպագանդի խնդիրներին»: Եւ այլն:

Տնտեսագիտական սեկցիայի նպատակն է լինելու ճանդոք և կարգակերպւած պայքար մղել տնտեսագիտութեան բնագաւառում եղած հակամարքսիստական, հակայեղափոխական ուսմունքների և հոսանքների (ուրիշնչիտա, կոնքրատեականութիւն և այլն) դէմ մի կողմից, և միտ կողմից՝ աջ և ճախ» թեքումների տնտեսական-տեսական հիմունքների դէմ (Բուխարինբուրգանովեան մեխանիստական կոնգրեզիայի հայն)»: «Մասալի լայն գիտա-հետազոտական աշխատանք Հայաստանի էկոնոմիկայի կոնկրետ խնդիրների ուսումնասիրութեան ուղղութեամբ»: Եւ այլն:

Պատմական սեկցիայի վրա պարտականութիւն է դրում «Ժրագրւած կերպով մշակել Դաշնակցութեան հակայեղափոխական հարցերը, լենինեան ուսմունքը:

լոյսի տակ աշխատաւորական լայն մասաների առաջ մեղակցելով նրա բուրժուական-ֆաշիստական և եւրոպական իմպերիալիզմի գործակալի դէմքը»: Անյայտազ ձեռնարկել Հայաստանի պատմութեան մարքսիստական ձեռնարկը գրելու գործին, կազմակերպելով այն կոլեկտիւ հիմունքներով»: «Յատուկ ուշադրութիւն ընձեռնել Հայաստանի քաղաքացիական կռիւների էտայներն ու մեր գործարանների, կոլեկտիւ և խորհրդային տնտեսութիւնների մարքս-լենինեան պատմութիւնը գրելու ուղղութեամբ»: Եւ այլն:

Գրական և արեւստի սեկցիան պէտք է «անսխալապէս ձեռնարկի արեւստի և գրականութեան մեթոդաբանութիւնի պրոբլեմների մարքս-լենինեան մշակման և ուսումնասիրութեան սիստեմատիկ աշխատանքին»: «Մասալուն պայքար մղելով գրականագիտութեան և արեւստագիտութեան բնագաւառում դուրս թիւն ունեցող հակամարքսիստական-հակալենինեան հոսանքների և ուղղութիւնների դէմ (պրոբլեմաւորականութիւն, վորոնսկիականութիւն, Ֆորմալիզմ, կոնստրուկտիւզմ, էտեռնալիզմ, լիտֆրոնտովչիտա և այլն)... կոնկրետ միջոցաւումներ մշակել աշխատանքի այդ բնագաւառը լենինեան էտայի բարձրութեան վրա գնելու համար»: «Յատուկ ուշադրութիւն դարձնել ձեռք ազգային և բովանդակութեամբ սոցիալիստական արեւստի և գրականութեան բնագաւառում լենինեան սկզբունքի անշեղ կիրառման կոնկրետ ուսումնասիրութեան վրա»: Ապագայի «գիտական-մեթոդաբանական ղեկավարութիւնը Հայկենոյի, թատրոնի, ՀՊԳ Ասոցիացիայի, համապատասխան մարմինների վրա» «Այժմ և եթ սկսել հայ գրականութեան մարքսիստական պատմութեան գրելու աշխատանքներն այն հաշւով, որ աշխատութիւնն աւարտել անուազը 1933 թիւն»:

Բնական գիտութիւնների սեկցիան «կոչւած է սիստեմատիկ և յամուտ պայքար մղելու բնագիտութեան տարբեր ճիւղերի և մասթեմատիկայի բնագաւառում առաջ եկած բոլոր տեսանքի հակալենինեան ուսմունքների և հոսանքների դէմ (մեխանիցիզմ-փիտալիզմ, քաջայայտ իրէպլիզմ և այլն) և գաղապնելու ու կոնկրետացնելու բնական գիտութիւնների մարքս-լենինեան մեթոդաբանութեան»:

Եւ, վերջին, մանկավարժական-մանկաբանական սեկցիայի վրա պարտաւորութիւն է գրւում «կազմակերպւած և սիստեմատիկ պայքար մղել մանկավարժութեան և մանկաբանութեան բնագաւառում եղած բուրժուական, մանր-բուրժուական ամէն կարգի և ուղղութեան հակամարքսիստական, ուղիտական հոսանքների և թեքումների դէմ՝ գաղապնելով և կոնկրետացնելով մարքս-լենինեան մանկավարժութեան սկզբունքները տնտեսական և պրակտիկ աշխատանքների ասպարեզում»:

Ինչպէս տեսնում է ընթերցողը, բոլոր բաժինների ուշադրութիւնը ուղղւած է քաջատապէս կուսակցական շահեկանութիւն ունեցող խնդիրների վրա:

Վերջապէս, ուլթը են իրականացնելու Մոսկուայից թիւրքւած այս նոր «ապարանքը»: Որո՞նք են այն երանելիները, որոնք իբր «մարքս-լենինեան օրթոդոքսալ իրէնդիան ընդունողները», նշանակել են Ինստիտուտի անդամների անդամներ: Ուրիշ իստքով,

ի՞նչ կազմ ունի Հայաստանի բարձրագոյն գիտական կաճառը: Արձանագրելից այստեղ այդ երեւելիներէ առնենքը, փառացի փառացի յաւերժացնելու համար ապագայ սերունդներէ աւգի՞ն:

Հայկենոգրթովոր Հաստատել է Ինստիտուտի իսկական անդամների հետեւեալ կազմը.

1. Պատմութեան Անկցիա

Ակոպով, Դոնուշի Դանիէլ, Ջօրեան Յակոբ, Սուճարեան, Կարինեան Արտաշէս, Յովհաննիսեան Արզար, Լուսարեան Կարօ, Մելիքեան Արշաւիր, Մարկոսեան Պուրէշ, Մաչկով, Եկուեան Հրանդ, Ներսիսեան Սաւլփան, Չուբար Եղիա:

2. Գրականութեան և Արեստի Անկցիա

Արոմ Իրոբզ, Գիւլիքէոսիան Հայկ, Դարադեան Նորայր, Հախումեան Աշոտ, Մկրտչեան Հ., Մազմանեան Միշո, Մելիքէթեան Սարգիս, Մակինցեան Պօլոս, Չուրից Եղիշէ, Սարգսեան Պորէշ, Սարգսեան Աշոտ, Սիւսեան Դրաստամատ, Վանտղեցի Գուրգէշ, Քոչար Գ.:

3. Բնագիտական-Մաթեմատիկական Անկցիա

Արովեան Սարգիս, Արէշեան Գրիգոր, Բաղդասարեան Ստեփան, Գարրիէլեան Ռուբէն, Յովհաննիսեան Եսակոբ, Հասրաթեան Եղրաս, Ղևոնդեան, Մասիս Ըրորիս, Մուշեղեան Տիգրան, Իւզրաշեան Սիմէոն, Երիցեան Ռուբէն, Փիրուեան, Քալանթարեան Պապա:

4. Դիպլոմատիկական և պատմական մատերիալիզի Անկցիա

Աստիկան Հայկազ, Արիսեան Լեւոն, Բզնուշի Արաս, Գիւլիքէոսիան Հայկ, Գարրիէլեան Էջնրի, Մելիքեան Արշաւիր, Մարտիրոսեան Վահան:

5. Մանկավարժական-Մանկարաճեական Անկցիա

Ատուածարեան Վէրգուշ, Դութեան Սէրիկ, Հայրապետեան Սահակ, Մուշեղեան Տիգրան, Սանթրոսեան Մուշեղ, Սիմակ:

6. Տնտեսագիտական Անկցիա

Աշոյան Ազօ, Ամիրխանեան Սեդրաք, Աշէյեան Պ., Արզումանեան Անուշաւան, Աղատեան Հայկ, Գուրոյեան Արրոհամ, Դութեան Վ., Ջուրաբեան Ս., Մատուրեան, Կասեան Սարգիս, Կոստանեան Վոսմ, Յովսէփեան Պորէշ, Յովսէփեան Արմենակ, Մակինցեան, Մալխասեան Վ., Միքայէլեան Սուրէշ, Եղիազարեան Արսօ, Եղանեան Միշա, Եսայեան Դարեգիտ, Սիմոնեան Դրաստամատ, Միլանեան Հայկ, Վլուգոս:

Սքանչելի է, չէ՞. Հայաստանի Ակադեմիայի անդամներ՝ Ակոպով, Դոնուշի, Վերգուշ ու Սերիկ — մարդիկ, որոնք հազուահազ երկրորդական կրթութիւն են ստացել: Այս դաւեշտական զակողեմականներէ երեք-քառորդից աւելին ամենաշածը կարող է գաւառական դպրոցում վարժապետ լինել կամ թերթի խմբագրութեան մէջ լրարբի ու սրբազրիչ պաշտօն կատարել, իսկ այսօր նրանք կուշտ են անդամակցելու մի երկրի զբարձրագոյն գիտա-հետազոտական հիմնարկութեան: Մի՞նչա՞նչ, որքա՞նչ է ի՞նչ են դարձրել Հայաստանը Ստալինների ողորմելի կամակատարները...

ԿԱՐՄԻՐ ԳԾԻՅ ՆԵՐՄ

(հորիդղ. Միութիւն և Հայաստան)

Այս տարւանից սկսած Վերջապէս պիտի ունենայ Պորթրալային Միութեան և Հայաստանի կենտրոնի ներքին անձնակազմի բաժին, ուր ամէն ամիս պիտի արձանագրուին այդ երկրներում կատարած դէպքերը: Այս բաժինը կազմելիս մեզ համար իբրև աղբիւր պիտի ծառայի, նախ և առաջ, խորհրդային մամուլը, ապա՝ արտասահմանեան հրատարակութիւնները և, ի վերջոյ, անմիջապէս մեր սեփական թղթակիցներէց ստացւած տեղեկութիւնները: Բնականաբար, դէպքերն ու երեւոյթները պիտի անցնեն ազատ լրատուութեան բովոյց, միայնով միշտ առարկայական ճշմարտութեան սահմաններում: Առանց միտումի ու կողմնափառութեան՝ պիտի ջանանք պատկերացնել կեանքը ինչպէս որ է:

Ներկայ յղածը, մի տեսակ, ներառութիւն է հալիք շարքի համար: Մասնաւորապէս արտասահմանի ընթերցողներն աչքի առաջ ունենալով՝ անհրաժեշտ համարեցինք նախ ամբողջ կերպով սալ Պորթրալային Միութեան և խորհրդային իշխանութեան կազմակեր-

պական ձեւն ու բովանդակութիւնը. ապա մի տեսութեան մէջ խոսեցնում ենք Հայաստանի միամեայ կեանքի կարեւոր երեւոյթները: Եկող անգամից գուզրից կը տանք Պորթրալ. Միութեան և Հայաստանի դէպքերի ամսական տեսութիւնը:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ  
ԿԱԶՄԻՆ ՈՒ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ

Պորթրալ. Միութիւնը, պիտական տեսակետից, դեռ գտնուում է կազմակերպման շրջանում: Տարեւտարի ձեւափոխում են նրա թաղաքական ներքին սահմաններն ու սահմանադրութեան սկզբունքները: Այսօր Պորթրալային Միութիւնը բաղկացած է 7 ինքնուրոյն հանրապետութիւններից — Պորթրալ. Ռուսաստան, Ուկրաինա, Բելոստսիա, Անդրկովկաս, Թուրքմենիստան, Ուզբեկիստան, Տաճիկիստան, որոնք իրար հետ կապւած են միութեանական (union, союз) կապերով և, ըստ սահմանադրութեան, վայելում են բաւական

լայն իրաւասութիւններ, նոյն իսկ Միութիւնից յօժար կամբով դուրս գալու իրաւունք (յօդ. 4) : Ի հարկէ, այդ իրաւունքը միայն թղթի վրայ է և գործնական արժէքից զուրկ է :

Պորճոց. Միութեան իշխանութիւնը բաժանուած է երկու մասի՝ պետական և կուսակցական զծով :

Պետական զծով Միութեան գերագոյն իշխանութեան մարմնացումն է խորհուրդների Համադրումը, որ այժմ հրահրուած է երկու տարին մէկ անգամ և բաղկացած է նահանգների և քաղաքների ուղարկած պատգամաւորներից. նահանգները, այսինքն՝ դիւրացիութիւնը մէկ պատգամաւոր է տալիս, 125,000 հոգուն, իսկ քաղաքները, այսինքն՝ բանուորութիւնը՝ 25,000 հոգուն :

Համադրումը չի կարող ժամանակ նրա պաշտօնը կատարում է Միութեան կենտրոնական Գործադիր Կոմիտէին՝ կենտրոնիկոմը, որ բաղկացած է երկու պայատարից՝ Համաժողովրդական Պորճոցից և Ազգութիւնների խորհուրդից : Համաժողովրդական Պորճուրդը ընտրուած է Պորճուրդների Համապետւածութեամբ, միութեանական Հանրապետութիւնների ներկայացուցիչներից, 300-400 անդամով : Ազգութիւնների խորհուրդը նոյնպէս ընտրուած է Պորճուրդների Համապետւածութեամբ՝ որոշ հոգալիս միւտու ունեցող ազգութիւններից : Ըստ սահմանադրութեան, օրէնդրական բոլոր գործողութիւնները պէտք է անցնեն երկու պայատարից. փաստօրէն այդ պայատար լուի ձեւակերպութիւն է : Կենտրոնիկոմի չի կարող ժամանակ նրա գեր կատարում է կենտրոնիկոմի նախագահութիւնը, որ բաղկացած է 21 հոգուց — 7 հոգի Համ. Պորճոցի նախագահութիւնից, 7՝ Ազգ. Պորճոցի նախագահութիւնից և 7՝ ընտրուած կենտրոնիկոմի կողմից : Նախագահութիւնը ոչ միայն դիտարկում է կենտրոնիկոմի, այլ՝ իրաւունք ունի կախարհել Միութեան անդամ Հանրապետութիւնների խորհուրդների որոշումները, հրատարակել դէկրետներ, որոշումներ ու կարգադրութիւններ, հաստատել ժողովուներ, փոխել Միութեան Ժողովխորհրդի կամ առանձին ժողովուների և Միութեան անդամ Հանրապետութիւնների կենտրոնիկոմների ու ժողովխորհրդների որոշումները :

Կենտրոնիկոմի գործադիր մարմինն է Ժողովրդական Կոմիտեի խորհուրդը՝ Ժողովխորհը, որի իրաւասութեան մէջ են մտնում Միութեան արտաքին, դիւետարկան ու ծովային, արտաքին և ներքին առևտրի, փոստ-հեռագրի, կազմակերպութեան, երևուտքի, աշխատանքի, երկրագործութեան, բանուոր-գրիւցարական տեսչութեան հարցերը, ինչպէս և Ժողովրդական Ծնտեսութեան Բարձրագոյն Պորճուրդը : Ժողովխորհը վարում է ամբողջ Միութեան գործերը, հրատարակում է դէկրետներ ու որոշումներ՝ պարտադիր Միութեան բոլոր մասերի Համար : Ժողովխորհի կողմից կայ Աշխատանքի և Պաշտպանութեան Պորճուրդը, որի անդամները նշանակուած են Ժողովխորհի կողմից և որի ձեռքին ամփոփուած է Միութեան բոլոր տնտեսական գործերի ղեկավարութիւնը :

Համաժողովրդական իշխանութեան ձեռքին է գրանուած և Պետական Բաղադրական Վարչութիւնը՝ Գլխուոր, Չեկայի յարդը, որ ստիականական և միևնոյն ժամանակի դատաստանական մարմինն է :

Միութեան անդամ կարող Հանրապետութիւններն ունին իրենց սեփական սահմանադրութիւնը և իշխանութեան կազմը, որոնք հիմնուած են միևնոյն սկզբունքների վրայ :

Անդրկովկասի Դաշնակց. Հանրապետութիւնը, որ Միութեան մէկ անդամն է, իր հերթին բաղկացած է երեք դաշնակց. Հանրապետութիւններից՝ Հայաստան, Վրաստան, Ազրբէյջան, որոնք բոլորն էլ ունին միևնոյն պետական կազմակերպութիւն — խորհուրդների Համադրումը. այս վերջին ընտրուած է կենտրոնիկոմ, սա էլ՝ նախագահութիւն, Ժողովխորհրդ : Օրէնսդրական

գործը վերապահուած է կենտրոնիկոմին, գործադիր իշխանութիւնը ժողովխորհրդին :

Անդրկովկասի դաշն. Հանրապետութեան անդամներ իրաւունք չունեն դաշնակցութիւնից դուրս գալու, ամբողջպէս ենթակայ են դաշնակցական իշխանութեան և անմիջական յարաբերութիւն չեն պահուած Միութեան կենտրոնի հետ : Այսպիսով, Հայաստանը կանոն մէջ է թիֆլիսից, և թիֆլիսի միջոցով միայն կարող է հաղորդակցել Մոսկուայի հետ :

Այս ամենը, սակայն, զգրակաւութիւնն է : Իսկական իշխող ուժը Պորճոցը : Միութեան սահմաններում կոմունիստական Կուսակցութիւնն է — Կոմկուսը, որի կազմակերպութիւնը արտօնապէս թողնում է ապակենտրոնացման տարւածութիւն, բայց իրօք ծայրայեղորէն կենտրոնացած է : Ձեւով Կոմկուսը բաղկացած է սղայային կամ շրջանային հասուածներէրց—Հայաստանի Կոմկուս — ըստ կուլթեան, այդ հասուածները ոչ մի ինքնուրույնութիւն չունեն և ընդհանրական Կոմկուսի պարզ օրակներն են :

Կոմկուսի գերագոյն մարմինը պարբերաբար հրահրուող Համադրումն է, որ ընտրուած է Կենտրոնական Կոմիտէ : Այս վերջին վարում է կուսակցութեան բոլոր գործերը՝ իր միջից կազմելով 5-7 հոգինոց երկու մարմին — քաղաքական գործերի Համար Գաղաքական Բիւրօ (Պոլիտբիւրօ) և կազմակերպական գործերի Համար՝ Կազմակերպական Բիւրօ (Օրգբիւրօ) : Ընթացիկ աշխատանքները ղեկավարելու նպատակով կայ 4 հոգինոց քարտուղարութիւն : Առաջին քարտուղարը այսօր Ստալինն է, որ փաստական վարին է թի՛ կուսակցական և թի՛ պետական բովանդակ իշխանութեան :

Բացի այդ, Համադրումը ընտրուած է նաև կենտրոնական Վերահսկիչ Յանձնաժողով, որի գերն է կուսակցական և խորհրդային գործերի ընդհանուր հրահրութիւնն ու հարցն : Ընտնութիւնը, ինչպէս նաև կուսակցական և խորհրդային մեքենայի բարելաւումը : Այս մարմինը, որ բաղկացած է 151 անդամից, իր կազմակերպական ցանցով տարածուած է երկրի բոլոր կողմեր և բանուոր-գրիւցարական տեսչութեան հետ միասին, կուսակցութեան ընդհանուր քարտուղարից ու Պետադպարչութիւնից շնորհ, ամենագորաւոր ուժն է խորհրդային իշխանութեան մէջ :

Բացի Համադրումարմներից, Կոմկուսը պարբերաբար ընտրում է խորհրդատուներ, Կենտր. Կոմիտէի լիազուծմար նիստեր, Կենտր. Կոմիտէի և Կենտ. Վերահսկիչ Յանձնաժողովի միացուած ժողովներ, որ որոշումներ են տրուած ընթացիկ կարևոր ինդիքների մասին :

Միևնոյն հիմունքներով, տեղական որոշ փոփոխութիւններով, կազմակերպուած են և սղայային Կոմկուսները : Օրինակ, Հայաստանի Կոմկուսն էլ ունի իր Համադրումարը, Կենտր. Կոմիտէն, Վերահսկիչ Յանձնաժողովը, լիազուծմար նիստերը և այլն :

Եւրոպայեանական տեսակետով, տեղական Կոմկուսները ստորադրուած են իրենցից բարձր հասուածին : Այսպէս, Հայաստանի Կոմկուսը ենթակայ է Անդրկովկասի Երկրային Կոմիտէին՝ Անդրերկրումն. սա էլ՝ Համաժողովրդական կենտր. Կոմիտէին : Վերջինից իր մէջ կենտրոնացնում է բովանդակ իշխանութիւնը և բացարձակ տէր ու տնօրէն է կուսակցութեան բոլոր հասուածների գործերի : Հայկոմկուսի Կենտր. Կոմիտէն, օրինակ, իր ամբողջ մեքենայով ու քարտուղարութեամբ Համ. Կոմ. Կուսակցութեան Կենտր. Կոմիտէի պաշտօնակատարն է, Անդրերկրի միջոցով, և սեփական կամք ու գործելու ազատութիւն չունի :

Կոմկուսը, ինչպէս ասացինք, միևնոյն ժամանակ և պետական իշխանութիւն է. կուսակցական մարմինները վերից վար նրան ենթակայ են և հաշուառու : Կոմկուսը բանուորական դիկտատուրան մարմնացնող ու իրականացնող ուժն է, խորհրդային իշխանութեան այլն ու բէն է :

ՀԱՅԱՍՏԱՆ

Հայաստանի մասին էլ խոսելիս, բնականաբար, առաջին հերթին պէտք է անջրի առաջ ունենալ Հայաստանի Կոմունիստական Կուսակցութիւնը՝ Հայկոմկուսը, որովհետեւ նա է երկրի փաստական իշխանութիւնը, իբրև գործադրող Անդրկրկմի և Համ Կոմկուսի կենտրոնի հրամանները:

1931 թվականը Հայկոմկուսի Համար սուրեց ներկուսակցական պայքարով: Աւելի ճիշտ է ասել՝ շարունակելը, որովհետեւ այս տարւոյ պայքարը շարունակութիւնն էր 1930ի խմբակային գլխուղի Կոմկուսի ղեկավարութեան շարքերում:

Կուր առարկան, այսպէս կոչւած, «Սրբոցով-Լոմի-նաճէ հակաստալիկեան բլրիկ» առաջ բերած շարժումն էր Կոմկուսի ծոցում: Այդ հողի վրա Հայաստանի կոմունիստներն էլ, որոնք մի-երկու տարի առաջ մէկ ճակատ էին ներկայացնում Աշ. Յովհաննիսյանի «Յարիկն ղեկանարութեան» դէմ, մեղքեցին իրար թշնամի երկու մասի՝ «ընդհանրական զծի» կուսակիցների և «այ սպորտունիստների»: Վերջինների զաղափարախօսն էր Վալդեմարովի կոմիտէի նախագահ, Հին կոմունիստ Ս. Կասանը, առաջիններին գլխաւորում էր Ստալինի մոնթ Յ. Պանջևանը:

Հայկոմկուսի ներքին վէճերը հարթելու Համար, նոյնիսկ Այն, Հայաստան եկա Պոլսորիքի տնղամ կերովը, որի տաճ ղեկուցումից յետոյ Ս. Կասանը անողոք քննադատութեան ենթարկեց Հայկոմկուսի ներքս արդող կարգերն ու բարբերը: Կասանը բողոքեց «Վարակայնական մեքնախօսութիւնների» դէմ, որ «Կենտրոնական Կոմիտէում կուլլկարի ղեկավարութիւնը փոխարինում է միանձայ ղեկավարութիւն, որ ինքը և իր հետ մարտին նաև մի քանի ընկերներ հնարաւորութիւն շունին արտայայտելու, ղեկավարութեանը մասնակցելու, որ կուսակցութեան մէջ գոյութիւն ունի անտանելի բեժիմ, բացակայում է ինքնաքննադատութիւնը, աշխատանքների ընթացքում կենտր. Կոմիտէն առաջնորդում է նեղ խմբակային շահերով, աշխատանքից հեռացնում է լաւագոյն կոմունիստներին և այլն և այլն»:

Հետեանքը եղաւ այն, որ Կասանը պաշտօնակ եղաւ և ջրեց Հայաստանից: Նրա հետ միասին արտաքսեցին և Հայկոմկուսի Կենտրոնի երկրորդ քարտուղար Ամատունին, Կենտրոնի Կարգաճամբ վարիչ Գ. Քեռալանը, հողողկոմ Ս. Չալանը, Ժողովարարի նախագահ Հանսողեանը և ուրիշներ: Այս պաշտօնակութիւններն ու արդոր կատարելց կոմկուսի Անդրկոմկուսի երկրային Կոմիտէի որոշումով. Երեւանը յետի թուով «մեծ խանդավառութեամբ» ողջունեց Թիֆլիսից եկած հրամանը: Ինկա. Յին, նոյն Անդրբերկոմի որոշումով, ընտրեց Հայաստանի Կոմկուսի նոր բիւրօն՝ Արամախան, Ակոպով, Անանեան, Ակի Քաղէ, Չաղէ, Գաղջեան, Օթեան, Տէր-Գարբիէլեան, Պանջևան, Արուսեան (Գաղվարչութեան պետ): Կոմկուսի քարտուղարութիւն՝ Ա. Պանջևան, Ա. Վալդեմարով, Ա. Գարգեան: Վերահսկել Յանձնաժողովի նախագահ՝ Ս. Ծահլերդովա: Այս կազմով Հայկոմկուսը ոտք կրեց 1931 թվականը:

Իր ձեռքն առնելով Հայկոմկուսի ղեկը՝ այս «նոր ղեկավարութիւնը» շարունակեց Հայածանքը ճալ-օպորտունիստների և «ձախ-քեարաբեղոցներ» դէմ, այսինքն՝ բուր նրանց, որոնք չէին ուզում Հայտուկ իր նեղ-խմբակային քաղաքականութեան հետ: Յունարի կէսերին մաքրագործել Լենինականի կարմիրբլուրութիւնը, մի շարք աջի ընկնող կոմունիստների պաշտօնից հեռացեցին ու պատժեցին «անսկզբունք խմբակայութեան», «արտըշխմայ» (Թափախախտութեան) ու «կոլիկայի» (խառնաշփոթութեան) ամբաստանութեամբ: Լենինականին հետեց Ալլանվերդին. Ալլանվերդուս՝ Դիլլանը և ուրիշ վայրեր:

Մաքրագործում կատարելց և «կառավարական զծով»: Փետր. 14-18ին Երևանում տեղի ունեցաւ Հայաստանի խորհուրդների 7րդ Համագումարը: Անդրկոմկուսի և Հայաստանի կառավարութիւնների հաշտութեան և զիւղամտեանութեան ու կրթական գործի մասին տրւած զեկուցումների բնութիւնից յետոյ ընտրեց նոր կենտր. Գործադիր Կոմիտէ: Այս վերջինս էլ ընտրեց Կենտրոնի կոմիտէ նոր նախագահութիւն և Ժողովրդական կոմիտարների խորհուրդը: Երկու մարմինների մէջ էլ հին կոմունիստների շատ զիւ մարդ ուղրեց. նրանց մեծ մասը, «այ» կամ «ձախ» թեքումի մեղադրանքով, ջրեց Հայաստանից: Այսպիսով թէ կուսակցական և թէ կառավարական զծով իշխանութիւնն ամբողջապէս կենտրոնացաւ Ա. Պանջևանի թափախի ձեռքը:

Մի պահ, կարծես, ներկուսակցական պայքարը մեղմացաւ, բայց շատ կարճ ժամանակով: Հետզհետէ նորից գլուխ բարձրացրին, այս անգամ որպէս բողոք «կոլխոզական կամբարկողութիւնների» դէմ, «ճալ-օպորտունիստները», «հաշտուողականները», «զաշնակիրմի ագենտները», «կուրսիները»: Այս արամարութեան իբր արտայայտութիւն Հանդիսացաւ Դարալագեակի կազմակերպութեան մէջ յայտնաբերւած «ճալ-օպորտունիստական» մտայնութիւնը: Դարալագեակի ճող կուսակցութիւնը՝ Երկրումի նախագահից ու քարտուղարից սկսած մինչև Չեկախի պետը, վարակել էին «զաշնակիրմով», կապ էին հաստատել «զասակարգային թշնամու» հետ և, առհասարակ, «ենթարկելու կուսակի և նրա իրէժողող գաշնակի մեղամեր և էվոլյուցիա կատարել ղէպի հակայեղափոխական ճահիճը»: Քննութիւնը յայտնաբերեց «այլաճակ փաստեր», և մի շարք պատասխանատու գործիչներ ենթարկեցին շատ խիստ պատիժների, մինչև վտարում կուսակցութիւնից:

Ինչո՞ւմն էր Դարալագեակի կոմունիստների «հակայեղափոխական» յանցանքը: «Պորբը. Հայաստան» (№ 171) ասելով՝

«Նրանք գտնում են, որ իբր թէ մեղանում բունի, ստիպողական ձեռով են կոլտնտեսութիւններ կազմակերպում, բառացի կրկնելով զաշնակների շարունակ ծամժամ այդ պրովոկացիան»:

«Նրանք ուզում են, որ կուսակցութիւնը հրաժարուի Համատարած կոլիկուստան հիման վրա կուսակցութեան որպէս դասակարգի վերացման քաղաքականութիւնից՝ միաժամանակ ազատ հողագործութեան խընդիբ դնելով»:

«Նրանք դժգոհ են կուսակցութեան հարկային քաղաքականութիւնից»:

«Նրանք բողոքում են բուր տեսակէ մթերումների դէմ»:

«Նրանք ոչնչով չաահանափակող ազատ առևտրի հաց են դնում»:

«Նրանք ասում են. «Թո՛ղ ցանէ ով՛ ինչ և որքան ուզէ»:

Իսկապէս որ մահացու յանցանքներ. խօսք չկայ, Դարալագեակի կոմունիստներ լաւ են իւրացրել «զաշնակիրմով»: Իայց դարալագեակից մենակ չեն. նոյն սխտով վարակել էին և ուրիշ շրջանների և նոյն իսկ կենտրոնական կուսակցական ու կառավարական մեքենաները: Դրութիւնն այնքան էր լրջացել, որ Պանջևանի ղեկավարութիւնը ստիպուած եղաւ դիմել նոր մաքրագործման:

Յուլիս 28ին Երևանում դուսարեց Հայկոմկուսի Կենտր. Կոմիտէի և Վերահսկի Յանձնաժողովի միացեալ Ժողովը, որը ջննելով ստեղծած կացութիւնը՝ որոշեց մի շարք հիմնական փոփոխութիւններ կատարել կուսակցութեան և կառավարութեան կազմի մէջ: «Հախարակական» փոփոխութիւններից յիշենք «զախարակական» փոփոխութեան նախագահ Ս. Յովսէփեանի «Գետալիստների» Պետական նախագահ Ս. Յովսէփեանի անկումը. բանորոպ-ըլուցիական տեսչութեան Ժող-

կամ և ժողովորդի նախագահի տեղակալ Ս. Ծաւ-  
 վերդովայի տեղ նշանակեց ուն՝ Գալոյեան, յուս-  
 ժողով Արտո Եղիազարեանի տեղ՝ Դր. Տէր-Սիմոնեան-  
 նը, մատակարարման ժողովում Վ. Մեղրոնեանի տեղ՝  
 Լ. Ղազարեանի և այլն:

Այս փոփոխութիւններն էլ մտքերը չհանգուտացրին.  
 Հայկովկասը խռոված, նեղքնայէս պատակուած, իր  
 ուժն ու հեղինակութիւնը բոլորովին կորցրած է ուր  
 դեռ 1932 թականը: Նրա բարոյական կէտը այնքան  
 ընկած է, որ նրան այլևս բոլորովին հաշի չեն առնում  
 ոչ ՔիՖիլիում, ոչ էլ Մոսկուայում: Երբեք Հայաստանի  
 խորհրդային իշխանութիւնը այնպիսի արհամարհելի  
 վիճակում չի գտնուել, որքան այսօր, երբ Քալֆայի-  
 կան հակամարտութիւնները հետեւանքով Հայկովկասի  
 ղեկը անցել է մտքով աղաքատ, անկարգաիր, անսկզ-  
 րունք, դէպից-դէնից հաշուած ինքն ու կրակ մարդ-  
 կանցից բաղկացած մի ողորմելի խմբակի ձեռքը:

Եւ տարօրինակ չէ, ի հարկէ, որ, այս պայման-  
 ներում, 1931 թականը Հայաստանի համար ամէն տե-  
 սակէտեց երկու շատ վատ տարի: Արտաքին աշխար-  
 հում ո՛չ մի քաղաքական գործ չկատարեց, որ այս  
 կամ այն ձևով օգտակար լինէր Հայաստանին: Ընդհա-  
 կատակը, բարեկամութեան դաշնագրի վերանորոգումը  
 Մոսկուայի և Անդրբայի միջև մի նոր օղակ էլ աւելաց-  
 ցրեց այս ժողովրդի մարմինը կաշկարանող շղթայի վրա:  
 Անդրկովկասեան չափաւելով ասելի եւս սաստկացաւ  
 Հայաստանի մեկուսացումը. Անդրկովկասի կառավար-  
 ութեան և փրակապետական կոմիտէի մէջ Հայաստանի  
 են յետին տեղ: Անդրկովկասեան Գեղարքունի Դատարանի  
 և դատախաչութեան կազմութեամբ, այս ամառ, դատ-  
 տական գործն էլ իւրեց Հայաստանի ձեռքից: Առան-  
 ձին հանրապետութիւնների, ուրեմն, և Հայաստանի  
 իրաւագրկումը հասաւ այնտեղ, որ նոյն իսկ Համ. Կոմ.  
 Կուսակցութեան կենտր. Կոմիտէի իր 31 հոկտ. որոշու-  
 մով պէտք տեսաւ արձանագրել, որ «Անդրերկրում չի  
 պատկոզել Անդրկովկասեան Դաշնակցութեան մէջ մտու-  
 նող ազգային հանրապետութիւնների լայն ինքնու-  
 թոյնութեան և տնտեսական նախաձեռնութեան ծաւա-  
 րումը»: Աւելի քան երբեք, Հայաստանը վեր է անել  
 մայրապալատի և ենթակից էլ գաղութայնացման ճնշիչ  
 քաղաքականութեան:

Այս քաղաքականութեան ամենէն շեշտած արտո-  
 յարութիւնը մենք տեսնում ենք Հայաստանի տնտե-  
 սական կենտր. բնագաւառում: 1931 թ. ընթացքում իշ-  
 խանութեան շնորհիւ գլխաւոր տարրերն եղան այն  
 նիւթերը, որոնք ղեկավարեցաւէս ծառայում են ինու-  
 սաստանի արդիւնաբերութեան կարիքներին՝ բամբակ,  
 պղինձ, պէմզա, տուֆ, կարբիտ և այլն:

Ամբողջ տարի տնտեսական գլխաւոր մասհոգու-  
 թիւնների կենտրոնում գտնուած էր, ինչպէս և միւս  
 խորհրդային հանրապետութիւնների մէջ, հնգամեակի  
 ծրագրի իրականացումը: 1931 թականը «հնգամեակի  
 երրորդ վճռական տարին» էր, որ, սակայն, շատ  
 անսովորութիւններ բերեց խորհրդային իշխանու-  
 թեան: Տարին փակեց անհաշիւ քրացեցրով ու ճեղք-  
 ւած քննեցրով: Եւ թէ և «Խորհրդ. Հայաստան»-ը իր սո-  
 նակեան յօդուածում (25 նոյեմբ.) պարճեկում է, թէ  
 Հայաստանի արդիւնաբերութեան զարգացման թափի  
 արագութիւնը «ոչ մի կապիտալիստական երկիր չի  
 տեսել երբ և ից է չի կարող տեսնել», իրականութիւ-  
 նը վկայում է ճիշտ հակառակը: Այսպէս, արդիւնա-  
 բերական ճիւղերի մեծ մասը չի կատարել «պղանք».  
 մասնաւորապէս «իտալոսակ» ու «կատասարոֆիկ»  
 դրութեան մէջ է հանգային գործը: պղինձը դեռ շատ  
 հեռու է նախապատեքրական արտադրութեան ստ-  
 րձանից և տարին փակում է լայն «ճեղքած»-ով:  
 Ըստ «պլան»ի 1931 թ. պէտք է պատրաստէր 6000 տոն  
 դուած պղինձ, բայց «31 թականի 10 ամսում պլանա-  
 յին առավելագրեւ կատարած է 60%»-ով: Բաներուե-

րի «հոսունութիւնը» անբեկակցելի չափերի է հասել.  
 Հեղեղակամ երբ զոյրութիւն ունեցող բանւորների թի-  
 ւը կազմում է 1700 հոգի, ընթացիկ տարւայ ստանին  
 9 ամսում ընդունել է 2216 բանւոր և հեռացել է 2117  
 բանւոր, այսինքն՝ բանւորների միջին թիւ աւելի քան  
 120%»-ը: Բանւորների փախստի պատճառներից մէկն էլ  
 ապրուստի ծանր պայմաններն են. ընկալանների պա-  
 կատութեան հետեւանքով ամառը նոյն իսկ բաց երկնքի  
 տակ են գիշերում, իսկ բնակարանային շինարարութիւ-  
 նը չարժուած է կրիտայի քայքայում. «պլանը 9 ամսում  
 կատարել է Այլաւզիբրում 42%»-ով և Ղափանում՝ 45  
 տոկոսով»: Հանրերի վարչութիւնն ու հաշւարկը դրու-  
 նում է աննախանձելի վիճակում, որի հետեւանքով  
 պղնձի ինքնարժէքը փոխանակ իջնելու արագորէն բար-  
 ճարում է. «ընթացիկ տարւայ օդոտտօրին, անցեալ  
 տարւայ հետ համեմատած, բարձրացել է Այլաւզիբր-  
 ում 40,4%»-ով, իսկ Եամրուղում՝ 28%»-ով. սեւ պղնձի  
 ինքնարժէքը բարձրացել է 20,40%»-ով, իսկ կարմիր  
 պղինձը՝ 19,6%»-ով («Ս. 2-ը, 5 դեկտ.»):

Պղնձից աւելի հրատալ է բամբակի ինդրը: 1931  
 թիւ ընթացքին Հայկովկասը և խորհրդային հողը հա-  
 տարակայնութիւնը զբաղում էին գլխաւորապէս բամ-  
 բակացանով, քաղհանով ու բամբակահաւաքով: Ուժե-  
 րի անհնարին լարումով, ամբողջ երկիրը մեծով ու  
 փոքրով, շարժման մէջ դնելով կարելի եղաւ ցանել վե-  
 րեց նշանակած 26,000 հեկտարը: Սակայն, ինչպէս և  
 պէտք էր սպասել, ակնկալուած արդիւնքը չտացաւ:  
 Բամբակի որոշ մասը փչանաւ ջրի պակասութեան պատ-  
 ճարով, մի մասը թողնեց արանց քաղհանի ու ինդ-  
 դեց վայրէ բոյաների մէջ, մնացածը հաւաքումն էլ  
 մասնակց «օպորտունիստական ինքնահոսի», թէ և բամ-  
 բակահաւաքի համար դաշտ քելեցին հագարաւոր բան-  
 ւորներ, կարմիր բանակայիններ, պետական պաշտու-  
 նաներ, ուսանողներ, աշակերտներ, գրողներ, դերա-  
 սաններ և այլ կարգի մատուրականներ: Մի քանի ան-  
 գամ հաւաքման ժամանակը երկարաձգեց, Հայկովկա-  
 սի Կենակոմը մի շարք խիտ հրամաններ արձակեց,  
 զորահաւաք թայտարարեց, մրցանակ նշանակեց, սպառ-  
 նաց, պատժեց, բայց մինչև տարւայ վերջն էլ բամբ-  
 կի մի մասը մնաց արտերում, անձերի ու ձեան տակ:

Նոյեմբ. 24-ին Հայկովկասի Կենտկոմի թարտուղա-  
 րութիւնը ահապահ ճնշեցրեց, թէ՛ «բամբակի հաւաք-  
 ման և մթերման տեմպը շարունակում է միանգամայն  
 անբաւարար մնալ, որ սպանում է կորցնել բամբակի  
 մեծ մասը և տապալի տեքստիլ արդիւնաբերութեան  
 մատակարարումը հունդից»: Առ 22 նոյեմբ. ինդ-  
 մենը մթերում է 9500 տոն բամբակ կամ տարեկան  
 պլանի 38%: Յապակալէս մեծ չափով յետ է մտնւ  
 Ղուրդուղուլու շրջանը, որը միայն պլանի 25% է կա-  
 տարեց: Ու նոր ուժեր շարժում դրեց, նոր մրցանակ-  
 ներ նշանակեց, պատասխանատուութիւնն ու ծանր պա-  
 տիճներ սահմանեց, բայց կացութիւնը ըստ էնութեան  
 չփոխեց: Հրաման արձակեց բամբակահաւաքը լրա-  
 ցնել մինչև նոյեմբ. 29, — այդ էլ շօշուփ: «Խորհրդ.  
 Հայաստ.»-ի 27 նոյեմբ. համարում կարգում ենք.  
 «Իրաւթիւնը չափազանց անբաւարար է բամբակի փրակ-  
 տում: Բամբակի հաւաքման և մթերման տեմպը չա-  
 փազանց թոյլ է: Չնայած կուսակցութեան վճռական  
 դիրկարիւններին՝ բամբակի բերքահաւաքը մինչև հոկ-  
 տեմբերեան յեղափոխութեան 11-ը տարեկանը աւա-  
 տելու մասին, չնայած բայլէկիկան շարքի կատար-  
 րելի պահանջին՝ ուժերի լրիւ մոբիլիզացիայով բամբ-  
 կի ֆորմտում վճռական բեկումն ապահովել, այնու-  
 ամենայնիւ խայտառակ կերպով շարունակում են թե-  
 րակատարել թերփախաւաքի պլանները բոլոր աշխուճ-  
 րում: Մինչև այժմ կատարւած է թերփախաւաքի պլանի  
 միայն 39%»:

Իսկ 9 օր յետոյ, յուսարահայկան ճիւղ է արձակում  
 ինքը Կենտկոմի թարտուղար Սանջեանը և բամբակացան  
 շրջաններին ուղղած հեռագրով հրամայում է, որ ամի-

չև դեկտ. 15 դաշտում շմեայ ո՛չ մի կնգուղ բամբակ» : Նոյն հետադրո՞ղ յայտնում է, որ «չկլմայական ան- նպաստ պայմանները, շարունակուղ ժիւնը կորստի վտանգ են սպառնում չհատարած բամբակի և կնգուղ- ներին: Դաշտերում մտնւմ է գզակի քանակութեամբ բացւած բամբակ և, մտնուանը, շատ չբացւած բամ- բակ»: («Պ. Հ.», 6 դեկտ.) :

Սակայն, պարզ է, որ Հայկումկուտի բարտուղարի ճիշն էլ չի օգնի. բամբակը կը փառնայ դաշտում : Տիրութիւն է բամբակի ցանքերի առգզման պատկերը : Հայտնուող խորճի կից կատարման անձնատորոզ վկա- յում է, որ քրամբակի ցանքերն տրամաբար ող նոր թմ- խուղը և թէ՛ մանր հողամասերը ջրով ապահովելու հա- մար Հայկումկուտի քանակ և այլ կազմակերպութիւննե- րի կողմէ՞ք ձեռնարկւած ուղիները բացայայտօրէն ան- րատարար են : Չնայած որ պղծները կազմուած են, սա- կային, աշխատանքները փաստօրէն շատ թոյլ են ընթա- նում : Առ 20 նոյնիսբ. 1931թ. Հայաստանի Արևելեան Դուրի ստորի մասում բամբակի նոր ցանքերի հետ կապուած աշխատանքները կատարուած են միայն 17,7%- ով, իսկ Փոքր Սարգսայապատի տարեկան պլանը կա- տարուած է 55,1% : Մանր շինարարութեան ծրագրւած 10 օրիկուտից այսպէս կամ այնպէս աշխատանքներ են կատարուում միայն 4 օրիկուտի վերաբերեալ: Նարի մասնուում և այլ վայրերում ճահճները մնացել են չշրջացւած. ոռոգման աշխատանքները չեն կատար- ւում. աշխատող ձեռքեր, հազուաու, սնունդ, բժշկա- կան օգնութիւն չկայ : («Պ. Հ.», 6 դեկտ.) :

Աւելի լաւ չէ վիճարկ երբրի տնտեսական կեանքի և միւս բնագավառներում: Բացի Անի-Պէճմարից, Երա- րասիի, Երևանի կարև ու Լեւինիականի Մեխանիկա- կան դործարաններէրց և մի քանի դիւղական տնտեսու- թիւններէրց, խորհրդային միւս բոլոր ձեռնարկութիւն- ները արտին փակուած են բացով: «Լեւինիականի Տեքս- տիլի, Երևանի Մեխանիկական, կարբոնի, Կոնսերվի գործարանները դեռ ևս ունին խոլոր ճեղքւածները Խ- ընկց պլանների կատարման գործում: Երկաթուղին... դեռ շատ է յետ մտնւմ իր արտը դրւած նոր պահանջ- ներէր: Թոյլ է ընթանում արտիւնարեական շինարար- ւութիւնը»: («Պ. Հ.», 7 դեկտ.) : «Ճեղքւածքներ գիւ- յատնտնութեան, անասնաբուժութեան, բլիչեդործու- թեան, ընկալարանային շինարարութեան, շրջառողման, կաշիի, ծխախոտի, փայտամշակման գործի մէջ:

Այսպէս, «շինարարութեամբ ապարկուած մենք ու- նինք ամօժայի ճեղքւածներ: Գրեթէ բոլոր շինակազ- մակերպութիւնների գծով, նոյն իսկ չորրորդ, հարւա- ժային կատարակուած գոյութիւն ունին խոլոր ճեղք- ւածներ: Այսպէս, օրինակ, Հայկումկուտում Ակպոեմ- բեր ամուսայ պլանը կատարւել է 48,33%ով: Հոկտեմբե- րին՝ 56,1%ով, Փոփոսան հոկտեմբեր ամսի հոգային աշ- կուանքից պլանը կատարւել է 51%ով, Քաղխորդից գծով (բաղնիքը և 27 շէնք) հոկտեմբեր տալիս է 41,5% և 31,8% և այլն: Նոյնանուան դրութիւն է տրուում 2րդ Երգեանում, Քանաքեղահում, Դուրեմում» : («Պ. Հ.», 27 նոյեմբ.) :

Երևանում 1931թ. ընթացքում կառուցման մէջ են Լպել ընդամենը 58 «օրիկուտներ», այսինքն չէնքեր, սրտցից «32ը Հայրենասիրի, 8ը Քաղխորդի, 18 Բնակչօստմիւթեան գծով» և այլն և «օպորտունիս- տական ինքնահոսի, անշարժութեան, նախաձեռնու- թեան բացայայտութեան» պատճառով դրանց կարևոր մի մասի շինութիւնը չի աւարտուել և փոխանցուել է յա- ջորդ տարւայ: Եւրոպայի մի երկրորդական գաւառա- կան քաղաքում ամէն տարի աւելի չէնք է շինուում...

Ձի իրականացում և կաշկարիացում պլանը: Ճիշտ է, «Հայաստանի խորհրդայնացման 11րդ տարեդարձին մեզ մօտ կրիկարուած է ամբողջ Գրեղայնական արն- տեսութիւնները 30 սուպուր, զի բամբակացան շրջան- ներում սննիք կրիկարուածման աւելի բարձր տոկոս» : («Պ. Հ.», 25 նոյեմբ.) : Բայց, ըստ Սանջանի, ամեր

կրումտեսութիւնները, նոյն իսկ լաւագոյն շրջաննե- րում, թէրացել են և թերանում են իրենց ամենակարև- ւոր աշխատանքներում: Բամբակի քերթաւորութեան ըն- դունւած նորմաների թերակատարումը մի՞թէ չի բա- ցատրուած առաջիկ հերթին նրանով, որ կրումտեսու- թիւններն այս տարի վատ կազմակերպուցին բամբակի մշակման գործը»: («Պ. Հ.», 29 նոյեմբ.) :

Անասնաբուժութիւնն էլ. «վերջին երկու տարեկե- րում դաշնակերպականի պրովկացայի ազդեցու- թեան տակ (որն նպաստում են այլ տրամադրութիւն- ները և «ձուր» քայլաչէղողութիւնները կրիկարուածման քնաղատում) քաւալան ևնացել է անասնուճնիքի ընդ- հանուր թիւը, որը ուժեղացնում է մահ և կաթնամթեր- ճի քնաղատումը եղած դժուարութիւնները»: («Պ. Հ.», 25 նոյեմբ.) :

Բնականարար, դարմանայի չէ, որ իբրև հետևանք տնտեսական այսպիսի անշինարարութեան ու շատով, սը- զում են մթերքմերի գններ: Մասնակարգման ժողկոմի հաստատած աակացոյցով, դեկտ. 5ին, մթերքները Երևանի պետական խանութիւնում մանրածախի հե- տեւեալ գներն ունէին. կաղամբ՝ կիլօն 23 կոպէկ, սոխ՝ 27կ., ճակնդեղ՝ 18կ., գետնախնձոր՝ 17կ., գաղար՝ 21կ., պանիր թուշի՝ 2 բուրդի 37 կոպ., պանիր տե- ղական՝ 1բ. 70կ., պանիր մոթալ՝ 1բ. 43կ., իւղ-կա- րալ՝ 5բ. 56կ., իւղ աղ արած՝ 3բ. 98կ., հալած իւղ՝ էր. 67կ., կաթ՝ 40կ. լիւրը կաշն : («Պ. Հ.», 5 դեկտ.) :

Քանի որ մէկ բուրդի, պետական հաւուով, Երեւա- նում արժէ 12թր. 50 սանտիմ, նշանակում է մէկ կիլօ կարագի գինն է 79 Քրանի, մէկ լիւր կաթին՝ 5թր. : Եւ այս գին պետական գներն են, պետական խանութ- ներում, որտեղից գնումներ անելու իրաւունք ունին մի- այն արտուտանքները, անդամատուրները և երկար ժա- մեր ԽՍԹի կազմակերպ. կարելի է երեւակայել, թէ՛, առհասարակ, ի՞նչ է կեանքը «այցիալիզմ կառուցող» այլ գործաղ երկրում...

Բայց, հարց է ծագում, մի՞թէ այս մի տարւայ ընթացքում Հայաստանի տնտեսութեան ո՛չ մի դրա- կան աղբիւնք չի ունեցել: Ի հարկէ, ունեցել է: Ինչպէս յիշելիքը, մի շարք գործարաններ և դիւղական տնտե- սութիւններ կատարել են իրենց զայանքը: Երևանի շինարարութեան 58 օրիկուտներէրց մի մասը լրացած է: Ե՛նքեր են շինուել և ուրիշ մայրերում: Թէ և մեծ ճեղքւածքներով, աշխատանքները շարունակեցին Չորսպետում, Քանաքեղահում, Դուրեմում, Յեմչինում, Քիշիկում, Դեմաքետում և ուրիշ արդիւնարեա- կան ձեռնարկութիւնների մէջ, բայց ոչ մի խոլոր «օրիկուտ» տարւայ ընթացքում չաւարտուց: Համեմա- տած ժողովրդական սօժերի արտակարգ լարման և նիւ- թական միջոցների ծայրայեղ սպառման հետ մտտքը Հայաստանի տնտեսական տարեկան հաշուկշի մէջ Եղաւ անհամեմատ աւելի քիչ, քան Ելքը: Երկիրը աւե- լի շատ վտանգ է, քան ձեռք բերեց: Այս է ամօլիւնիք իրականութիւնը:

Այս իրականութիւնը կարելի կը լինէր և թէական աղբիւնակները պատկերացնել, Եթէ բոլշևիկ իշխանու- թիւնը, այս տարի առանձնապէս, ամէն կերպ շխտա- փէր թէական տեղիւնութիւններ հաղորդուցին: Խորհրդ- պային մասնուր լինէ է «պիտանութիւն», բայց շատ քիչ փաստեր ու թէւեր է տալիս և ինչ որ տալիս է, մեծ մա- սամբ դիտանումաւոր ու հակառակուան տեսներ է պա- րուանուում:

Նոյնն է պատկերը և բարոյական-մշակութային տեսակէտից: «Էնտուզիզմ», խանդավառութիւնը, ու- ռով, իբր թէ, համարւած է Հայաստանի բնակչութիւ- նը, արդիւնք է վատ ևրեակայութեան. բամբակի, պղնձի և միւս բարւ «Քրոնտներ» օրինակը ցոյց է տա- լիւ, որ ժողովուրդը թշնամական աչքով է նայում բոլ-

չեկինքնիքն զէլնարարութեանը»։ «բանտի և ռուսներին»՝ դրան ապացոյց։ Ս' է մի ձեռնարկ չկայ, ուր աշխատող ձեռքերի պակասութիւնը չդազուցի։ Իշխանութիւնը ոտակառակաւ միջոցներով զիւղերից մարդիկ է հաւարում, չեկրաններէ հսկողութեան տակ աշխատեցնում է հանքերում, դործարաններում և դաշտերում, բայց և այնպէս բանտարկան ուժի հոսունութիւնը անսահման է։ Բամբակի հաւաքում, հանքի արտադրութեան կամ վար ու ցանքի համար մրցանակներ ու դրամական նշքներ է նշանակում, «սոցմբցում» ու «կոնտրակտացիա» պարտադրում, բայց և այնպէս մարդիկ չեն աշխատում և փախչում են։

Կարծիք չէ ուրանալ, որ կառավարութիւնն ու պաշտօնական մարմինները մեծ ճիշդ են թափում վերից հրահանգած ծրարիները դործարելու համար, բայց այդ ճիշդը հանդիպում են ժողովրդի կրաւորական, երբեմն նոյն իսկ և դրժմոս դիմադրութեան։ Կոյրուղական շինարարութիւնը՝ դրա ցայտուն ապացոյցը։ Հայ երկրաբարութիւնը կործանուեց, բայց համատարած կոլտրոպցումը գլուխ չէկաւ։

Սոցքերի և փաստերի հակասութիւնը տեճում ենք կեանքի բոլոր ապարիզներում և, ի հարկէ, նաև կերթական-մշակութային գործում։ Հայկենտրոն որոշէ և մինչև 1932թ. բոլորովին վերացնէ անգրագիտութիւնը, իսկ երեսանի քաղաքները մեկու՛ «Հայաստանի խորհրդարանացման տարեդարձին» երեսանը պետք դարձնէք համատարած դրագրիտութեան քաղաք», բայց ահա տարեդարձն էլ անտաւ, 1932 թվականն էլ հասաւ, իսկ անգրագիտութիւնը շարունակում է փթթել որջը Հայաստանում, և, ի հարկէ, նաև երեսանում։ Զիշտ է, լուսնոյդիմ Գր. Միտնիսնով մեզ հաւատացնում է, որ «Մոսկով» Հայաստանի բանտը դասակարգը կերտում է պրոլետարական կուլտուրա — ձեռով ազգային, բոլորակալութեանը միջպայանակում։ Վերականգնումում են հայկական կուլտուրայի բոլոր անցեալ արժէքները։ Այդ իսկ պատճառով Միխիթարեան աստուծապաշտ հարկերը, անմահութեան անշնչող Եանիքերն ու Ահարոնանիքը, բողբոջան անշարժներէ» փետուրներով ծածկում թէ՛ շէնհաններն ու Մալէկաններն իրաւունք ունին արտասանութիւն աշքերով գիտելու մեր կուլտուրական տառապանացումը։ Յ բարձրագոյն դպրոցներ, չուրջ 60 տանիկիւմ, հազարից աւելի նախնական դպրոցներ, մօտ երկու հարիւր եօթնամեայ դպրոցներ, բանտարկան Ֆիզիկալտետեր դարձնում են մեր աճող, պատանի և երիտասարդ սերունդ մարդ-ինիկան աշխարհահայտացը»։ («ՏԻ. 2», 2) նոյն)։ Բայց խորհրդային թերթերում ամէն ուր կարդում ենք, որ ամբողջ ընթացիկը միացել են ասանց դպրոցն, ասանց ուսուցչի ու դասադրբի, որ դպրոցների համար յաակացած դրամը ծախուում է ուրիշ կարիքների վրա, որ հազարաւոր երիտաներ թափաւում են փողոցներում։

Մասնաորայէս սուր է ուսուցիչները պակասը։ Երջաններ կան, որոնք չեն կարողանում դպրոց բանալ, որովհետև դասատու չի ճարում։ Իսկ միւս կողմից խորհրդային իշխանութիւնը կասկածի տակ է առել և հայաստանի է ենթարկում անիրաւակալական ողջ մտաւորակաճարութիւնը։ Այբրից սկսած Հայաստանի վրայով էլ անցաւ հակամաստրական պող տիւրը։ Այնպիսի որակից մաստրական մասնագէտներ, ինչպէս Հր. Աճառեան է, Մ. Արեղեանը, Յ. Մանասղեանը, Յ. Բաջարեանին, Ստ. Կամարաբախանը, Երկրովիիկեանը, Կ. Աթմասեանը և շատ ուրիշներ ենթարկեցին կառուարի յարձակման իրենց հակալինիկան «զրբաւորման» համար։ Մի մասը Հեռացիկ պաշտօններից, ուրիշներ իխտ նկատարութիւն ստացան։ Ոմանք էլ, ինչպէս սկսաւ. Ռամանեանը, սոխուլած եղան հրապարակով «հրաժարիմք ու նպովնեք» կարողալ բուլնիկեան հայաստանից դեմը մնալու համար։ Իսկ, այսպէս կոչւած, «ուրիկիկ գրողները» Գ. Դեմիրճեանի առաջնոր-

դութեամբ շտապեցին ծունկի գալ Պետագովարտութեան առջև։

Մինչև այսօր էլ Հայաստանի մաստրականութիւնը պարում է վարի ու սպանուիքի տակ։ Այն հիմնարկութիւնները, ուր ընչ-չաւտ մնացել էին մտքի ազատութեան փշրանքներ, «լուծարքի» են ենթարկւում ու վերակազմում լինիկիվի հիմունքներով։ Գիտութեան և Արեւտարի Ինտրուտիւն էլ, որ Հայաստանի բարձրարակ հաստատութիւններից մէկն էր, դատապարտուեց նոյն ճակատադրին և այժմ վեր է աճում զուտ կոմունիստական մի հիմնարկութեան։

Գրական-հասարակական տեսակէտից էլ 1931 թվականը բոլորովին անպարտաւ անցաւ Հայաստանի համար։ Ս' է մի աչքի ընկնող չէկ շարտագրէք։ Գրական ոչ մի նոր երևոյթ առաջ չէկաւ։ Գրաչէտները շարունակեցին «նեքշնչել» խողովարի կառուցման ինդիկներով և ապագրած ոտանաւորներ ու արձակներ շարագրելով։ Գրական «դիսկուսիան» շարունակեց խուովել պրոլետարականութեան ծանձող ճահինը, ասանց կենդանի շարժում առաջ բերելու։ Հեղինակներից շատերը «զործուղեցին» արդիւնաբերական ձեռնարկները, հանքեր, գործարան, քամբակի ճակատ, որտեղից «կազեանի» գրութիւններ են ուղարկում թերթերին։ Գրագէտը, բանաստեղծը վերածուեց ինտիլիկն — մեծաւորն նաատացումը, որին երբեիցէ մասնակ էլ գրականութեան սպասուորը։

Մամուլը աւելի քան երբեք խեղճ էր թէ բանակով և թէ, մանաւանդ, որակով։ Գծար է երեսակայն աւելի անբովադակ, մտքով և դազամուկներով աւելի աղքատ, աւելի ստրկաւոր։ Հրատարակութիւններ, քան Հայաստանի մամուլը։ Անդամ համիտեան օրերին աւելի ազատութիւն կար։

Միակ հարցը, որը բուլնիկ գրողներին յայն ազատութիւն է տային և երեսակայնութեան բերին ասնճ չի դնում, հայիդաբն է Հ. Յ. Գրաչակցութեան հասցին։ Դաշնակցութեան դէմ կարելի է գրել ինչպէս և ինչպէս կուզուի՝ թէ՛ արձակ և թէ՛ ոտանաւոր, թէ՛ թերթերում և պարբերականներում և թէ՛ ասանճին հրատարակութիւններով։ Այնեալ տարւայ ընթացքում Դաշնակցութեան ներկեցին մի շարք ճուտումաւորութիւններ է անհաշիւ յօղակներ թերթերում։ Իոյնիկ չեղինակների կարծիքով Հայաստանում տեղի ունեցող բոլոր վատ բաների պատճառը Դաշնակցութիւնն է։ Կոլտրոք չի յարչուում — Դաշնակցութիւնն է մեղաւոր զիւղագրէ սաւաւր են մորթում — պատասխանաւոր Դաշնակցութիւնն է. բամբակը փչանում է դաշտում, ի հարկէ, Դաշնակցութեան դործն է. բարձրագոյն դպրոցներում և կոմսոմսում, գործարաններում կամ զիւղերում ազգային արածարութիւններն են աճում — յանցաւորը Դաշնակցութիւնն է. կոմունիստների շարքերում «թերումներ» են առաջ գալիս — մեղքը Դաշնակցութեան վրին։ Անչիւղ և կամ Ֆրանսան դրամ չի տային — Դաշնակցութիւնն է գրողներ։ Մի իսուցով, ամենայն շարեք ազրիւրը Դաշնակցութիւնն է։ Ինչ կը լինէր բուլնիկների գրութիւնը, եթէ չլինէր Դաշնակցութիւնը, դ'ամ վրայ պիտի ձգէին իրենց անճարակութեան, իրենց անբարեխղճութեան, իրենց իմար գործերի պատասխանաւորութիւնը...

Աւ, վերջպէս, Հայաստանի անցեալ տարւայ դէպքերից արձանագրենք Ձանգեզուրի մեծ երկաշարածը, որ սեղի ունեցաւ ապրիլ 28ի գրէքը և յաջորդ օր։ Վնասուեց 130 գիւղ, որից 66ը 1791 անտուտութիւններով ամբողջապէս քանուեց։ Սպանուեց 382 և ծանր վիրաւորուեց 758 մարդ։ Կործանուեցին 8704 տներ և փայցաւ 5292 եղջիւրաւոր անտուտ։ Մեծաւոր վնասուեց Տաթևի վանքը։ Միայն Ղափանի պղնձահանքերը մօտ երեք միլիոն բուրբու կորսան ունեցան։ Արանճապէս մեծ շիփով ուտեց Միխեանի ընթացի, ուր փրատակների տակից հանուեց 219 զիակ և 277 ծանր վիրաւոր։

Հայաստանի գլխին եկած այս տարերային աղէտը լայն արձագանգ դուռ ո՛չ միայն Պորճուր: Միութեան ներքը, այլ և արտասահմանի բոլոր Հայաստան վայրերում: Հանքանակութիւններ կտատարեցին: Ամէն կողմից փութացան օգնութիւն, սակայն, Հարաւոր այնքան ուժեղ էր, որ մինչև այժմ էլ շատ վայրեր մնում են չլիքաշինած:

Արտասահմանը, առանց կուսակցական խորութեան, շատ ջերմ արձագանգ տուց և ներգաղթի լուրին: Ամառը խորհրդային էլիտանութիւնը յայտարարեց, որ արտասահմանի Հայերից որոշ քանակութիւն առնելու է Հայաստան: սկիզբը 6000 հոգի, ապա՝ ևս 4000 և յետոյ, աստիճանաբար, էլի 20.000: Մասնաւորապէս, Հ. Յ. Դաւնակցութիւնը անկերպազ համակրանքով ողջունեց այս քայլը: Սակայն, ահա տարին

լրացաւ և ներգաղթի շուրջ յարուցած ազմուկը աւելի բուռնիկեան պրոպագանդին ծառայեց, քան թէ ներգաղթի գործին: Արտասահմանի Հայութեան Հայրենասիրութիւնը մի աւելորդ անգամ Հարազորութեց յօգուտ բուռնիկեան քարոզութեան:

Այս բոլորով Հանդերձ, Հայաստանը գաղութահայութեան համար շարունակում է մնալ միակ միութարանքը և յոյսի զլխաւոր փարոսը: Բռնապետական կարգերը, որոնք տիրում են այնտեղ, պատճառ չեն ու չպէտք է լինեն, որ գաղութահայ գանձածները երես դարձնեն Հայաստանից: Ընդհակառակը, այդ կարգերի գոյութիւնը հէնց խթան պիտի լինի, որ գաղութահայութիւնը աւելի ջերմ ու գործուն հետաքրքրութիւն ցոյց տայ դէպի Մայր-երկրի վիճակը:

## Թ Ի Ի Ր Ք Ի Ո Յ Շ Ո Ւ Ր Ջ

Տարին սկսաւ ու վերջացաւ տնտեսական հոգեբով, — շատ աւելի ծանր քան ուրիշ տարիները: Տարեան վերջին վեցամսեան եղաւ տաժանելի, քրոնայան երկրունք մը, ոչ միայն յախտնեանպէս բաց էլ մտացոյցը հաւատարակելու, այլ և արտածման և ներածման կէտը սուսնելու համար: Եր նախահաշիւը արդէն կանգ առած է 110 միլիոնի վրա — փոխան 200-220 միլիոնի: Իսկ անտարական կէտը փրկելու համար, պատերազմական ծրարքի մը պատրաստուած է արդէն, աւելի իշտու քան կը նախատեսուէր:

«Երօշակ»ի նախորդ համարով պարզեցինք ներածման դէմ հրամանագրուած սահմանափակումները: Եր 16ի այդ հրամանագիրը արդէն կը գործադրի խտորէն: Իւրաքանչիւր ամսու 10ին կը կազմէի բաժնեցուցակ մը (հոքա կամ ֆոնքէնդամ), յաջորդ երկու ամսուան ներածումներուն համար: Ներածելի ապրանքներու քանակը կորոշի համարներով, մետրով կամ քերտկրամով: Եւ յաճախ դաւելուական տեսարաններ ալ կը պարզին: Օրինակ, 1932 յուլուտ, փետրուար և մարտ ամիսներու բաժնեցուցակը պատրաստած առեւն, «Ճոռցեր են» յիշել ներածելի թէյին քանակը: Որով թէյը դարձած է Հարազորման նիթթ, անօրինակ սղութեան մը հասնելով: Իսկապէս մոռցե՞ր են, արգելե՞ր են թէ կաշառքը մթապներ է քննիչներուն աչքը — խնդիրը այն է որ թէյը գլուար կը նարէի թուրքերոյ մէջ, ինչպէս և սուրճը:

Ներածումներու սահմանափակումը մեծ դժգոհութիւն պատճառեց օտար առևտրականներուն, որոնք ախ առին իրենց դեպքանատունները: Եւ դեպքանները, երբեմն կակոզի, երբեմն ամուր, յաջողեցան որոշ ճեղքեր բանալ եղած կարգադրութեանց մէջ, գոն 1931 նոյ. 15էն առաջ եղած ապրանքներու համար: Իսկ եղան առևտրականներ ալ որ փոխադարձ միջոցներու դիմեցին: Այսպէս, գերմանական գործարանները, որոնք մինչև հիմա լայն վարկեր կը բանային իրենց թուրք յաճախորդներուն, համարախհուրդ որոշեցին 25% կանխիկ պահանջել այսուհետև:

Ներածումներու սահմանափակման դորաշարքին զուգադիպեցաւ «Սնանդութեան Ետաթի»ի երկրորդ շրջանը, որ բացուեցաւ դեկտեմբեր 12ին, զորպապին ցոյցերով, թափօրներով, բանախօսութիւններով և միութիւններով: Իւրօրոյնին անգամ — ոչ-իւրօրոյններն ալ — հրահանգ ստացան քարոզ կարգալ խնայողութեան և ազգային տնտեսութեան մասին: Իսկ օրաւ վարկչները Հայրենասիրական . նստի արասասանցին անթելուով:

Առաջինը խօսեցաւ Քևեղիմ փաշա, Ազգ. Մեծ Ժողովի նախագահը, ժամանակաշարի շեշտելով:

— «Վեր երկիրը ամէն տարի օտար երկրներու ծախած ապրանքէն աւելի օտար ապրանք կը դնէ: Այս կերպով ամէն տարի միլիոն հաշուով 50 միլիոն ոսկիի բաց մը կը դոնայայ մեր առևտրական Հաշուհշուին մէջ: Եթէ այս բացը չկարենանք գոցել, թրքական դրամին արժէքը կիջնայ: Ամէն տարի 107 միլիոն ոսկիի ուտելիք և հազնելիք ապրանք կուզայ մեր երկիրը: Այս ներածումներուն մէջ կան կարագի, ձիթապտուղի, պանիրի, միսի, բրինձի, բուրգիայի և հաւելիթի պէս ուտելիքներ որոնք ամենալաւ տեսակներ կան մեր երկրին մէջ: Ողջոր տեղ մը կը բռնեն նաև բամպակէ, բուրգէ և մետաքսէ հիււանդեղները... Եթէ ամէն Հայրենասիրց պարտականութիւնը համարէ տեղական արտադրութիւններով ապահովել իր ուտելիք և հազնելիք պէտքերը, այն առեւն այդ կարգէն տարբարայի ապրանք չի կրնար մտնել մեր երկիրը... Եթէ հինգ միլիոն թուրք Հարքնիկցիներ օրը հինգական դրուշ խնայեն, տարին քսան միլիոն կը Հաւաքի: Տասնըջորս միլիոննոց թուրք աղէն գոնէ հինգ միլիոն Հայրենակիցներ անշուշտ կրնան օրական հինգ դրուշ աւելցնել և պահել... Մեր ազգային իլխաւոր դրամատուններուն մէջ 30 միլիոն ոսկիի խնայողութիւն կը գաճուի: Մեր առաջին նպատակը պէտք է ըլլայ գոնէ 90 միլիոնի բարձրացնել այդ պատճառը»:

Ճառ խօսեցաւ նաև Ըսմէթ փաշա, վարչապետը, տարբեր երեսն մը դիմելով կացութիւնը:

— «Չանպակ հաշիւներու համաձայն, ամէն տարի 20-25 միլիոն ոսկի վնասի կենթարկուի պետական զանձը, մաքսանեղութեան Հետեանքով: Եթէ ստոր կէսը լիտակ ըլլայ և այդ տասը միլիոնը պետական զանձը մտնէ, այն առեւն մենք ալ դժարութեան չենք մատնուիլ»:

Իսկ երկրորդն գործաւարը, Ապուլու Սալիբ պէյ, (Բաղէշի Մարզապարը) պատմեց.

— «Մեր անցնալ տարւան էլմտացոյցը 186 միլիոնի վրա Հաստատած էինք և նախահաշիւը գրեթէ իրականացած էր: Մինչդեռ այս տարի, թէև էլմտացոյցը Հաստատեցինք 184 միլիոնի վրա, առաջին շուրս ամիսներուն քրօպանքը միայն 58 միլիոն ոսկի: Մինչդեռ 1928ի առաջին շուրս ամիսներուն ստացած էինք 66 միլիոն, 1929ին՝ 78 միլիոն, և 1930ին՝ 64 միլիոն: Հաստացանք թէ յառաջիկային այդ գումարն ալ չպիտի կը-



նանք ստանայ: Այս պարագան յայտնի եղաւ արդէն Հինգերորդ ամիսն:

«Միւս կողմէ, անցեալ տարի մէկուկէս միլիոն անդլ. ոսկի ունէիք, իբրև արտածումներէն աւելցած գումար: Այսօր 45 միլիոն Փրանք ունիք: Ուրեմն, 50 միլիոն ոսկիի տարբերութիւն մը կայ: Հաշիւ ըրած էինք թէ երկաթուղիներէն երեք միլիոն ոսկիի ստացիթ մը պիտի սպասուէինք, մինչդեռ կէս միլիոն ստացանք»: Նորութիւն մը չկայ այս յայտնութիւններուն մէջ, որոնք տարբերու վերջեր կը մատնանչեն, մասնաւորապէս երրորդ մասուն: Բայց նորութիւն մը եղաւ Հայրենասիրական թափք, իբրև Հետեանք նոր կարգախօսին. — «Հայրենակից, միայն թրջական սպարանք գործածէ»: Աղբ. Մեծ Փողովի նախագահը ինչպիսիութեան շարաթի ճառէն շատ աստջ, ներածումներու սահմանափակման առթիւ, արտասուէ յայտարարութիւն մը ուղղելով ժողովուրդին, յորտեք պահէլ թրջական սպարանքին արժէքը և միայն թրջական սպարանք գործածել: Դաւաճանաւթիւն Հռչակեց շահադիտութիւնը, և իբրև նախախօսք Հնչեցուց «ազգային անկախ անտեսութիւն»:

Օրէնքին վիճաբանութեան առթիւ, երեսփոխան մը ստաշարկեց... Իրենց խնուութիւն առելու կարել է այն անտեսականները որ կը մերժեն տեղական սպարանք ծախել: Ուրիշ մը պահանջեց անկախութեան ատենաներ կազմել շահադիտութեան և մաքրանկեղութեան դէմ:

\* \* \*

Այս հարցնախարկան պողովուծները պիտի բաւե՞ն Դանայան կարար լեցնելու և ամայի ու աւերակ թուրքեան ծաղկեցնելու: Փամանախը պիտի պատասխանէ այս հարցին: Միայն սպիկիւնի է որ բեմապահութիւնը բացարձիկ ճիշդ մը կը թափէ, նոր ճակատամարտ մը չաւելու, — «տեսնական Տումու Փունարը, ինչպէս կ'ըսեն իրենք: Թաղապաշտին վրայ, գէպի ժողարշաւին յարողութիւնը (1922) ներշնչման աղբիւր մըն է նոր թուրքեայ Համար: Եւ եթէ տասնի այս ճակատին գանաղան կէտերուն վրայ, ամէն պարագայի մէջ իր գլխաւոր ուժը պիտի թափէ դէպի Հարաւ, դէպի սուրիական սահմանազօնի երկայնքը:

Արշարեւ, այն օրէն ի վեր որ ներքին գործախարք պտոյտ մը կատարեց այդ կողմերը, և «երևան Հանեց» մաքրանկեղութեան ծառայումը, մամուլ և կառավարութիւն ձեռք ձեռքը առած են, ընդարձակ սիտեմատիկ արշաւանք մը կ'սկսեցինք պիտի Համար:

Անցիդ անգամ, առիթ ունեցանք յիշելու թէ ներքին գործախարք և իր Հետևորդները, ինչպէս և Սուրբոյ մէջ թուրք նստած լրտեսները մաքրանկեղութեան ծառայումը կ'ըլլան արժանի այդ գաղթականութեան դէմ, զայն ցիր ու ցան, «փէրիշաւ» վիճակի մը մատնելու սպառնալիքով: Այս սուղերը գրեւտ ատեն, սրբազան պատերազմը կը շարունակի անօրինակ ուժեղութեամբ, երկրորդական գծի վրայ ձգելով բուն շարիքը — մաքրանկեղութիւնը:

Լաւ է իօսիլ փաստելով, և կարգով:

Դեկտ. 6ին, կէս-պաշտօնական «Ճիւմհուրիյէթ»-ը կը դերի իր խորագրապահին, Հռչակաւոր Ենուս Եսաթի պէչի ստորագրութեամբ:

— «Միշնչե Հիմա սահմանադրութի դէպքերուն առթիւ դրացի կառավարութեան թարեցակամութիւն շտեանք: Ընդհակառակն, չկրցանք ապստիլ այն ենթադրութեանէն թէ մաքրանկեղութիւնը և անպահտփութիւնը պարագայէս քաշալուրութիւն կը գտնեն պաշտօնական ձեռքերէ: Չենք վարարիլ բռնելու որ Ֆրանսայի կողմէ Սուրբոյ Հիւսիսային մեր սահմաններու վրայ Հայ դատկակաները տեղաւորելու Համար եղած ջանքը անհասկնալի մնայու պատասխարտած պատմական իրողութիւն մըն է:

282-2000

«... Կարելի՞ է քարկամական նկատել թուրքեայն մեկնած Հայ գաղթականները թրջական սահմաններուն վրայ տեղաւորելու ձեռնարկը... Այս մարդիկը մեր ասիմաններուն վրայ շարի իբրև մեզի անհանգստութիւն պատճառող տարր մը կը նշանակէ անոնց կեանքին հետ յաղայ: Երբ մեր անդորրութիւնը խանգարող յոյները քանդուլու կտրուարկեն, պատասխանատու պիտի մնան անոնք որ իբրև գործիք մը ծառայեցին այդ մարդիկը: Եթէ բան թէ միջազգային բարդութիւններ կը ծագին այդպիսի գործերէ, ասիկ է միայն մենք, այլ ուրիշներն ալ պէտք է վախնան: Երբ մեր գոյութեան կը սպառնան, մենք չենք վայնար միջազգային բարդութիւններ: Ինչպէ՞ մեր քիթին տակ կը խոթեն հայ գաղթականները: Ինչպէ՞ հաշի չեն աւելնր որ օր մը երբ դասակը անկորնի հտտնի, այդ մարդիկը ցիրուցան և թշուա վիճակի մը պիտի մատնեն: Այս պարագան հաշի անկորով գիտակցորէ գործողները բացայայտ աճիդ մը կը գործեն: Առհասարակ քանի ռատենմ է կրեւիք. — այս ոճիկը ոչ թէ մենք, այլ ուրիշներն են որ կը գործեն»:

Դեկտ. 13ին, «Միլիէթի» խորագրապետ Մահմուտ պէյ, որ մեկնելու ատեն երեսփոխան է և ընկերացաւ ներքին գործախարհի ճամբորդութեան, կրկին արծարծելով մաքրանկեղութեան խնդիրը, գրեց թէ սահմանաձեռք գիւղերու Հայերը մաքրանկեղութիւն կ'ընեն ոչ միայն շահու անկախութեամբ, այլ և թուրքեան անտեսապէս քանդելու Համար, քանի որ չկրցան քանդել քաղաքականապէս:

Դեկտ. 16ին, «Ճէնի կիւն», թուող խումանապարօրաթերթ մը, որ Նազրի փաշայի Յուշերը սպեց «յաւելալ և ճոխացեալ» մանրամասնութիւններով, միջտեղ դրաւ նոր խնդիր մը. — Ֆրանսացիները կաշխատան Հայկական պետութիւն մը կազմել, «էլ Ճէգիրէ կառավարութիւն» անուանով: Այս եղանակին վրայ մայն բունեց, աւելի ճիշտ՝ տուն ուսու նակ «Ճիւմհուրիյէթ», դեկտ. 16 թվակիր թղթակցութիւն մը հրատարակելով յիշուրթէն: Նոյն պատմութիւնը՝ աւելի ընդլայնած, — Ֆրանսացիները կ'ուզեն քանդել սուրիական միութիւնը, զօրացնելով փոքրամասնութիւնները: Անոնք Արարներէն աւելի կը խորշին Հայ, ասորի, չէրեզ, ջիւրա և քաղղէպի Հասարակութեանց վրայ, դանոնք իրենց Հատարիմ և կուսակից Համարելով: Սակայն, իրականի մէջ, ստույգ է որ վարապարի ետև ծածկած նպատակն է Հայկական բոյն մը կազմել այս շրջանին մէջ: Ֆրանսացիները այս նպատակով Հանրագրութիւն մը ստորագրելու կուտան ժողովուրդին և այդ շրջանի խառն բնակչութիւնն ալ կը ստորագրէ, առանց տեղեակը ըլլալու իր արջին առջև խաղացած վտանգաւոր խաղին»:

Դեկտ. 17ին, 18ին, 19ին և 22ին, «Միլիէթի» մէջ, Նաշիք շաֆըր կուտած թշուաական մը պատրաստ որս գտնելով, թաւեցաւ ու փչեց... Եթէ Հասարակութիւնը որ պատմութեան, մասնաւորապէս Հայկպի մէջ Հասարակութեան բոյն ծածօթ Հայերը «գաղապէս են» (մաքսանենք): Եւ ոչ միայն անհատներ, այլ և Դաշակցութիւնն ու Հոյալունալ պ իրենց դրամալուրիլ յարակցացած են մաքրանկեղութեան: Նոյնպէս մաքրանկեղութեան բոյնը են վերջին տարիներու ընթացքին Հասարակութեան Հայկական գիւղերը:

Բանի մը Հասարակութեան գրութեանէն, իբրև բնորոշ ապացոյց տիրող Հողեքանութեան և Հետապահուած քաղաքականութեան:

— «Այսօր Հաշիպի շրջանը Սուրբոյ կուշիլու Համար Հազար վկայ կուգէ: Փայասնէ մինչև Ճէգիրէ կը կարող աղտոտ երկը ու շատոնց սուրիական Հանգամանք Հանած է այս վայրերը: Սուրբոյ տիրողները թուրքեայ դէմ թշնամացնելու Համար այստեղ Համախմբեցին շաննէ, ցիցէն սպատած Հայ Դաշակները, չէչէն և ջիւրա ապակները, դարեթի ի վեր իրենց ցեղն ու ծնունդը մոռցած մարդիկը...»

«Հանգանակութեամբ հայկական գիւղեր շինեցան: Ասոնք թ'նչ պիտի ուտէին, ի'նչ պիտի խմէին: Ոչ Սուրբա, ոչ մարդասիրական մարմինները, ոչ ալ Սուրբոյ տիրոջները կը կշտացնէին ասոնց փորը: Իսկ Հայէպը օրէ օր կը խաւարէր: Հայէպի բանուկ արհեստները Թուրքիոյ մէջ ալ կը գարդանային: Հայէպ իր տրտադրութիւնը իր մէջ ծախելու կարող զաղաք մըն ալ չէր: Եւ դարձաւ մաքսանկեղներու զաղաք մը, մաքսանկեղներու գլխաւոր զաղաքը: «Եւ մաքսանկեղութեան դրօշին տակ հաւաքեցան» —

«Հանգանակութեամբ սահմանադրութիւն կրկայնը լեցնող Հայերը»

«Հովանաւորութեամբ թրքական սահմանին վրա համարձակելու հրահրում Հայերը»

«Քրի Նոյ սաացող Հայերը»

«Քանի մը հարիւր իստանբուլները (կահնարկէ իւրը դաւաճան սեւ ցանկը անցած Թուրքերուն)»

«Թուրքիոյ մէջ ձեռքերը արիւնի մէջ թաթխելէ մէկ շաբաթ յետոյ Հայէպին նամակ գրող թշուառականները»

«Աւազակութենէ ուրիշ արհեստ չունեցողները»

«Քիւրտերն ու Հայիւրը պիտի եղբայրացնենք ըսելով առ ու ան խաբողները»

«Հայրենիք չունեցողները և ամէն տեսակի սոցալոգները»:

Ինչպէս կը տեսնէք, ջարջախի՛չ են փաստերը: Եւ ինչո՞ւ պարմանալ որ էնկիւրի այնքան բառացիկ օրէնքներ մշակած է, այս բոյները քանդելու և Թուրքիոյ տնտեսութիւնը փրկելու համար: Կառավարութիւնը օրինազիծը յանձնելով Աղզ. Մեծ Ժողովին, 300,000 ոսկիի վարկ մը պահանջած է, մաքսային ղէտերու ընդհ. հրամանատարութիւն մը հաստատելու համար, որուն կեդրոնը պիտի ըլլայ էնկիւրի: Վարչական միջոցներէն գտաւ, ձեռք պիտի առնէին զինուորական միջոցներ, գիտական վերջին նորութիւններով: Բոլոր զաղաքներուն և գիւղերուն մէջ, կարելի պիտի ըլլայ խաղաղութեան ենթարկել ո'րեւէ տուն: Պատժներ նարատեսած են 16,000 ոսկիէն մինչև տասը տարբանտարկութիւն: Դատավարութիւնը պիտի կատարէ ասոնց սովորական ձեւակերպութիւններու:

Աստո՞ք՝ օրէնքին արմատարկութիւններն են: Իսկ թէ ինչեր կրնան կատարելի զարտաքոյ օրինաց, դրօժը այսքան ուռեցնել, մանաւանդ Սուրբոյ Հայ պալատականութիւնը իրեն խոսովարոր և մաքսանկեղ ներկայացնել յետոյ, պարզ տրամաբանութեան խնդիր է: Թուրքերուն համար անձրևն ու կարկուտն անգամ կրնան պարտակ ծառայել զաղաքական հարմանքի, ջարդի և աւարտութեան: Այնպէս որ յղարմանանք, ի՞նչ հարաւային սահմաններուն վրա եւս կրկնեն այն զբաղադրութիւնները որոնք այնքան աւեր ցանեցին արևելեան Տակոստին վրա:

# Թ Ղ Թ Ա Կ Ց Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

(Մի հատած քղթակցութիւնից)

«... Գրեցի ու պրոպագանդից աւելի ժողովրդի և է, իտասարդ սերնդի վրա ազդում է խորհրդային իրակնութիւնը: Դիտելով փաստերը՝ ամենքն էլ համոզում են, որ խորհրդային իշխանութեան զարգացանութիւնը ճիշտ չէ ո՛չ միայն ազգային հարցում, այլ և բոլոր սոսկարկներում, բայց, մանաւանդ, տնտեսականում: Երկիրը հասել է սոստեսական ծանր դրութեան՝ գիւղատնտեսական մթերքների և լայն գործածութեան ապրանքների բացակայութեան: Այս բոլորը ի մի առած, այլ և գիւղացիութեան բռնի կոլտոգացման ենթարկելն ու առանց այլևայլութեան ապակոլտակացումը բնակչութեան բոլոր խաւերի գանգաձային դժգոհութեան աղբիւրն է:

Ի զէպ, երկու խօսք կոլտոգների մասին: Համեմատած ընթացիկ տարբայ արաջին եռամսեակի շնտ զկոլտոգները թւով աւելացել են», այսպէս են գրում բուլղերիկեան թերթերը և օրինակ են բերում, որ 1931թ. յուն. 1ին Ապրէլէանի կոլտոգներում եղել է 55,034 կոլտոց, 1ին հոկտ. 1ին Ապրէլէանի կոլտոգային սեկտորը ընդգրկում է 137,961 տնտեսութիւն, որոնք կազմում են ողջ հանրապետութեան միջակ և շքաւոր տնտեսութիւնների 41,7%ը:

Ըստ տնտեսութեան ճիւղերի Ապրէլէանի կոլտոգները ներկայացնում են հետևեալ պատկերը.

տնտեսութիւն		
Բամբակային շրջաններում	61,190	56,3%
Երկրագործական	32,028	39,1%

• Անասնապահական	17,971	31,4%
Այգեգործական	9,942	27 %

Մասնաւորապէս ինքնավար Լեռնային Ղարաբաղում կոլտոգների մէջ հաշուում է 8,923 տնտեսութիւն, կամ 35,4%:

Այսպէս են թերը, իսկ որակի տեսակէտից կոլտոգները կատարեալ ոչնչութիւն են ներկայացնում: Այսպէս, գիւղերից եկողները և տեղերից ստացուող լուրերը հաստատում են, որ կոլտոգների ներքը աշխատանքը հարիւր սոկոսով կազմում է: Ամենուրեք կոլտոգների մէջ տեղի են ունենում կոլտներ ու գանգաձային հետաքուտներ: Այսպէս, իմ հայրենիքում մինչև օգոստոսի սկիզբը կար 121 կոլտոց, սեպտ. 10ին՝ 107, սեպտ. 25ին՝ 105, իսկ հոկտեմբերի կէսերին՝ 89:

Ի՞նչ է պատճառը այս երևոյթի:

Պատճառ շատ կայ, բայց կոլտոգների զայբայման հիմնական սրտաճառները հետևեալն են: Նախ՝ Հացամթերումը. կոլտոգների վրա գրել են Հացամթերման այնպիսի ծանր պարտականութիւն, որ գիւղացիները մնում են ասանց հացի ու սերմացուի: Ապա, բերքի հաւաքումից յետոյ, շատ տեղեր, բաշխումը կատարել է այնպէս, որ առանձին գիւղացիների կտուցած նապաղային չափը չի բաւականացել նոյն իսկ կէս ամսայ: Յետոյ, տեղի են ունենում մեծ դժգոհութիւններ, որ կոլտոգում աշխատող և չալխատող անդամներ միջև տարբերութիւն չի գրում: Հէնց որ հնարաւորութիւն է ստեղծուում, մարդիկ փախչում են կոլտոգներից: Կոլտոգները սլահուում են գլխաւորապէս բռնի ուժի միջոցով:

ԼՈՒՐԵՐ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՆԵՐ

Վասպուրակոնի մի շարք շրջաններից անցած վրաստանի մի անձնատրուժիւն յայտնում է, ի միջի այլոց, հետեւեալ տեղեկութիւնները.

— Հայոց Զորի բոլոր հայկական զիւղերը քակեցւած են քիւրդերով. թիւրքեր համարեա չկան: Այս կողմերն են տեղափոխուած Արարատի շրջանի բոսնից ցեղին պատահող քիւրդերը. պարսպում են հողամշակութեամբ և մասամբ անասնապահութեամբ: Տնտեսական միջակը չարտարանց անմխիթար է, որովհետև պետութիւնը հայկական հողերը պետականացրած լինելով՝ ծանր պայմաններով կապալով է տալիս քիւրդերին մշակելու:

Արտոսի լանջին գտնուող Չարահան Սուրբ Նշան վանքը աւերած է:

Ողջարում և Հայոց Զորի Կղզի գիւղում նստում են միւսերիներ, որոնց իւրաքանչիւրի տրամադրութեան տակ կան 7-10 սասիկան զինւորներ միասին: Անգղ զիւղում կայ գորանոց, ուր գտնուում է քորտոն զօրք: Զօրարածին կենտրոնը վանն քաղաքն է. փոքրաքանակ զօրամաս կայ Պաշալէում:

Կաւաչի շրջանն էլ նոյն պատկերն է ներկայացնում: Նարեկ գիւղում ներկայիս սպրում են քիւրդեր: Նարեկ հեշակաւոր վանքի կէտը թիւրքերը քանդել են և սրբատաշ քարերը փոխադրել Ոստան գորանոցի շինութեան համար:

Քրդութիւնը ամէն կողմ չափազանց գրգռում է թիւրք տիրապետութեան դէմ: Թիւրքերը խիստ միջոցներ են ձեռք առնում թիւրքացնելու համար քրդական սարբը:



Ժ Ի Ր Ա Յ Ր

«Կարապետ Միճեան», «Էջալի Կարապետ», «Կիլիկեցի Կարապետ», «Կիլիկեցի Գեորգ», «Ժիրայր» — հաւ մէկ քանին այն անուններէն, որոնցմով կը ճանչցուէր «Նէրվիշ» մարդ մը, որ հայ յեղափոխութեան ամենէն ներկած գործիչներէն մին եղաւ, աշխատեցաւ, տառապեցաւ տասնեակ տարիներով, մոռցած աշխարհ ու մարդիկ, և մարդիկ ու աշխարհ չիտեցան անոր մասին:

Կարապետը, կը գործէինք էր հետ, էր հրահանգներով, բայց չգիտէինք թէ ի՞նչ էր էր իսկական անուն-ազգանունը, ո՞րք ծնած էր և երբ: Կրուէր թէ գէյթուցի էր, սերած Միճեան ընտանիքէն: Այնչափ և ուրիշ ոչինչ:

Այսպէս անձանօթ մնաց ու զնաց այն մարդը, որ հայկական յեղափոխութեան սիլքնական օրերէն ի վեր նւիրեցաւ դաւադրական աշխատանքներուն ու կատարեց այնպիսի ծառայութիւններ, որոնցմով վաստկեց շատ բժայիկներ ընկերներու զնահատութիւնն ու հիացումը: Անոր գործունէութիւնը սահմանափակած չէ որոշ շրջանով ու վայրով: Գործը միայն կլկեց զայն, բայց ոչ ժամանակն ու վայրը: Անաստիա, Կիլիկիա, Կովկաս, Հայկական Բարձրաւանդակ և, վերջապէս, դարձեալ Կիլիկիա եղած են անոր գործունէութեան վայրերը, ինքնուրուիկ թւականներէն մինչև Կիլիկեան աղէտը: Ամէն ժամանակ ու ամէն վայրէ մէջ ան դրադած էր դաւադրական ու փոխադրական գործերով: Անոնց սիրահար մասնազտն էր:

Մամօրացայ իրեն (աւելի ճիշտը՝ տեսայ գինքը) 1904ի ամբան. «Հովիտսի» մէջ: Հագիւ երկու շաբաթ մնացինք միասին: Գնաց պաշտօնատեղիով, «Մահմադարերը»\*\*):

\*) Հովիտ — Այնթապ:  
\*\*) Սահմադարերը — Մարաշ:

Դաշնակցութեան Կիլիկիայ Պատասխանատու Մարմինը գտած էր յարմար մարդը գործին համար — լուր, ներկած մարդը, յեղափոխական՝ անձնագրահան, համեստութեան պահանջող վտանգաւոր գործին — յանձին Հաջի Կարապետի:

Ժիրայր յեղափոխական աշխատանքի լուծած է ինքնուրուիկ թւականներուն, և իբրև մաքաննույ մեծ դեր կը խաղայ էր հայրենիքին — Զէյթունի — 1895ի ապստամբութեան նախապարսպական աշխատանքներուն մէջ: Ապա կանցին Եգիպտոս և ինքզինք դնէ շ. Յ. Դաշնակցութեան տրամադրութեան ներքե: Սերաստացի Մուրատին հետ կանցնի Կովկաս, ուր կունենայ երկար տարիներու գործունէութիւն: Ահա՛ թէ ինչպէս կը նկարագրեն զայն Վ. Համարսլուսեան և Կոմս:

«Եգիպտոսի մէջ մի քանի ամիս մնալուց յետոյ, իւր գէյթուցի ընկերով Ժիրայրի (Կարապետ Միճեանի) հետ անցնում է Կովկաս և միանում, շ. Յ. Դաշնակցութեան հաղուկային խմբերին: Կարսի շրջանի պատասխանատու գործիչներն ու կազմակերպիչներն էին նրանք: Մուրատն ու Ժիրայրը իրենց անկեղծ և բոլորանէր գործունէութեան շնորհիւ, շրջանի անխախտ համակրութիւնն են շահում և կուսակցական զինապահեստը առնում իրենց խնամքի տակ»: («Դրօշակ» 1926, թիւ 8—10, էջ 265):

«Սահմանազլի մեր գաղտնի գործակալներն էին կիլիկեցի Ժիրայրը և սվազցի Մուրատը (հետագայի մեր յայտնի հերոսը): Գլխաւոր դէմքը Ժիրայրն էր: Խորհրդաւոր անցեալով մի մարդ էր նա, նախ հնչակեան էր եղել, կարեւոր դեր էր ունեցել Կիլիկիայի ապստամբական նախապարսպութիւնների մէջ, էրբ ուղղամթերքի մաքանենդ, ապա մի սպանութեան պատճառով անցել էր Կովկաս: Միջհասակից փոքր, բայց լայնաթիկունք, արեւա լայն դէմքով, խոշոր ճաղատ դիմով, երկար սև մորուքով ու սև մեծ աչքերով մի մարդ էր, որ հեղ էր և սակաւատես՝ երբ

աշխատանքի մէջ էր, բայց վտանգաւոր՝ երբ խմում էր: Իսկ նա սիրում էր յաճախ խմել, բայց գործից ազատ ժամանակը Պարբերաբար երևում էր Ալեքսանդրապոլում, երբեմն փայլանած ձիով, իսկ աւելի յաճախ մայրականի Ֆուրզոնով: Այս պարագային, նա իբր Սարգսամիրում առևտուրի տէր՝ բազմաթիւ արկղեր կիսում էր Ֆուրզոնի մէջ, երկու չէլ ուղի դնում կողքին և մայրականի հետ շան ասեղով-լան լսելով՝ վերադառնում էր: Այդ արկղները ռազմամթերքով լցեւած արկղներ էին, ի հարկէ: Իսկ երբեմն զալիս էր դիւղահան սայլի վրա նստած գեղջուկի հագուստով և չորտուխը փիլիսոփայորէն ծխելով: քաղաքից տանում էր մանր մուշր անմեղ բաներ, իսկ ռազմամթերքը այս դէպքում պահւած էր սայլի մէջ շինւած յատուկ գաղտնի պահարանում: Հետագայում աւելի յաճախ Մուրադն էր երևում, նա ընդհանրապէս սիրում էր փայլանած ձիերով գալ՝ երբեմն 3-4 ձիով: Փայլաններից գարիի ցօղերի մեծ մասը դուրս էր հանում, նրանց փոխարէն հրացաններ դասաւորում, նորից կարում ու ապա համազօն իրերով բեռնաւարւած վերադառնում էր. կամ շատ անգամ Կարսի կամ Սարգսամիրի վաճառականների համար վարձով ապրանք էր տանում: Թէ՛ ժիրայրը, թէ՛ Մուրադն միայն Ուտտա Գարբիէլի հետ գործ կուճենային. կոմիտէի միւս անդամները Գարբիէլի զեկուցման միջոցով տեղեկութիւն կը ստանային այդ մասին»: (Կոմիտէ «Անցած Օրերից», «Հայրենիք» ամսագիր, Բ. տարի, թիւ 7, էջ 113):

Մենք այս անգամ Հաջի Կարապետը պիտի տեսնանք ուրիշ տեղ, 1903ին: Դիւղիկէն դէպի հարաւ, Եփրատի ափերու սկսած լեռներու վրա գտնուող քարայրներու մէջ, Դաշնակցութեան ռազմամթերքի փոխադրութեան գծի վրա: Սուքը տանք նորէն Կոմսին. «Սողումով, իբր յետևից հազիւ մտնում էինք ծաղկ և 8-10 մէթր թաթերի ու փորի. վրա ինչում ներքեւ և մինչև որ բացեցին երկու խոշոր քարայրներ: Այնտեղ բաւական սոււերներ մեզ էին սպասում, որոնց հետ համարուեցինք՝ ծանօթ անձանքով: Մոմերի և պատրաստ կրակի լոյսով հեղհեղեղ նշմարեցինք ուրախութիւնից փայլաստուող շատ աչքեր, յետոյ դէմքեր:

Յիշում եմ միայն երկուսին:  
Կարճահասակ, վտիտ և համեստ հայեացքով՝ Սրլաքն էր, որին ծանօթացրեց Վահանը, իսկ երկրորդը նոյնպէս կարճ, բայց խոշոր մի մարդ, որ վառվռուն հայեացքով, ուրախ ժպտով մեզ մտնեցաւ և ինքն իրեն ներկայացրեց.—

— Հաջի Կարապետ, կիլիկեցի, ոտքով մինչև հոս եկած, այս պահուս ալ յեղափոխութեան աշխ. . .

Բոլորս ծիծաղեցինք: Իսկպպէս մի մեծ կաթնայ կրակի վրա առատ գոլորչի էր թողնում:

— Աղէկ խաշլամ եմ պատրաստեր, անուշ ըրէք, տղա՛ք, դուրպան ըլլամ ձեզի:

Եւ շերտին ու ձեռքերը իբր խոռոնով, Հաջին լօջ հացերի վրա միտնել, քիսասնների մէջ հեղուկը՝ ըջում էր մեր առաջը ( «Հայրենիք» ամս. Բ. տարի, թիւ 8, էջ 124):

Հաջին նոյն ձեռքը, ծպուած, մինակ, վզին փոքրիկ մի կաշւէ պարկ ձգած կերթայ Վան: Ու կը լծի հոն նոյն դժւար ու պատասխանատու գործին: Նորէն

Կոմսը պատմում է. «Զինւած խմբեր և օտար դործիչներ գողւանում էինք մանաւանդ զաշխարհի վայրերը ուղարկելու: Նոցա ներկայութիւնը շատ շուտ աչքի պիտի ընկնէր: Բայց կազմակերպութեան ծաւալման հետ, այդ պահանջը գալիս էր տեւեւից. պատճառաբանում էին նրանով, որ դորսից եկած անձանք գործիչներ աւելի հեղինակութիւն կուճենան, մանաւանդ, եթէ նոցա ուղեկցեն զինւած զինուորներ:

— Ժողովուրդը չի հաւատայ յեղափոխութեան, եթէ զինուոր և հրացան չտեսնի.— գրում էին նրանք. . .

Այդպիսի փորձ արինք, ուղարկելով Թիմարի շնրջան արդէն ձեզ ծանօթ Հաջի Կարապետին. այդ ձեռքը Տաջ-Աղբիւրից եկել էր ծպուած, մարմնացի սուրհանգակ «Մնջիկ»ի առաջնորդութեամբ: Հաջին չուճէր մտաւոր պատրաստութիւն, բայց ժողովուրդի հոգեբանութիւնը հասկանում էր, նրա լեզուով, նրա հոգուց խօսել գիտէր, սիրում էր ժողովուրդը, նրա մէջ և նրա նման ազգի գիտէր: Դաշնակցական էր բառի անհաննդ իմաստով. ապրում էր նրա աւանդութիւններով, պատմութիւններով: Երկար ժամանակ նա ազրեց Թիմարում էր պարզ գիւղացի, դիւրաբարբեց, բայց ոչ զինոս ու չար՝ նա ճանաչեց ու սիրեց գիւղական ժողովուրդից:

Ալիւր և Ռժիղկ գիւղերում մենք ունէինք արդէն Սարգիսը, Տիգրանը և Արեսողումը, որոնք Հաջիի թեքին էին լրացնում և գործակցում նրան: Վզրում նա չէր ըմբռնում, որ ժողովուրդը անպատրաստ է և անձանք յեղափոխական գործունէութեան: Բուռն միջոցներ էր գիտում, ծեծում էր գիւղացիներին և սպասուում նրանց կողքէ մի փոքրիկ դանակով, որով երեկ հաւ էլ կը դժւարանար մորթել: Կոթի վրա փորել էր աւել «Սուր արդարութեան» բառերը և զայրանալու վայրկեանին ճօճում էր օդում գողալով «Յեղափոխութիւնը ձեզի համար է, աւանակներ, սովորեցէք վերջապէս յեղափոխութիւն ընելը»:

Հաջին Թիմար ուղարկելու. գլխաւոր պատճառը ռազմամթերքի փոխադրութիւնն էր: Թիմարը կեղտոնական մի գուռու էր, որտեղ միանում էին մեր փոխադրութեան երկու գծերը՝ Արաղուի և Արճէլի: Տեղացիները խուսափում էին լծել այդ ծանր և պատասխանատու աշխատանքին, շատ անգամ գեղծումներ էին պատահում և վտանգւում: Պէտք էր դուրս մէկը, որ ճանապարհի վրա գտնուող գիւղերում պահեստներ պատրաստէր, փոխադրող խմբեր կազմակերպէր. հրահէր և պարբերաբար մեզ հասցնէր անվթար: Մինչ այդ, մեր փոխադրութիւնները կատարում էին, գրեթէ բացառապէս, զինակիր խմբերով, այդ խմբերի հետեւանքով առաջնած շարիքը այնքան մեծ էր, որ յիմարութիւն կը լինէր չարժանակելը:

— Բայց ինչո՞վ փոխարինել նրանց: Ի՞նչպէս ռազմամթերք մոցանել երկիր:

Վասպուրականի վիճակէց մշակել նոր միջոցներ, որոնք կարող էին խել նւագագոյն զոհեր միայն և աւելի արդիւնաւոր պէտք է լինէին. սա, այսպէս, կոչւած, «ծծման» եղանակն էր:

Հաջի Կարապետը Թիմարում և Շիրիին ու ապա Մշեցի Յարութիւնը իր խմբով, անգնահատելի ծառայութիւններ արին՝ հսկելով անցքին և արագաններով

A.R.A.R. @ digitized by

վտարացումը: («Հայրենիք» ամս. թ. տարի, թիւ 11, էջ 69):

1904ին ժիրայր վերադարձաւ Կիլիկիոյ չըջանը և «Հայրենի» ճարտով հասաւ իր սպառնառնողին՝ «Մահմանաբերդ», ուր իբրև կառավարան տեղադրեցաւ հարուստ ընտանիքի մը (Ս-ի\*) մօտ: «Մահմանաբերդ»-ի մէկ ընկերները, գրեթէ առանց բացատուիման, նախկին հնչակահաններ էին: Ժիրայր շատ վստահութիւն չունէր այդ մարդոց կուսակցական գաղափարականութեան վրա: Այդ պատճառով կողմէր կերպով մը չեղբացնել դանոնք և առաջ քաշել նոր սերունդը: այդ երիտասարդները, որոնք Գանակցութեան աւարտին միտուութիւնն ստացած էին, անոր հարազատներն էին: Ան կը կրկնակի դիմումներով զդուշաւուց «Հովիտի» կոմիտէն, որ հետո մնայ հիմերէն, և կը սահանջէր, որ աւելի Պարեաթութիւն ընծայէ «Հովիտի» մէջ գլխունով «Մահմանաբերդ»-ը ուսանող երիտասարդներուն: Ժիրայր սխալած չէր:

1905 և 1906 թուականներուն տեղի ունեցան ձերբակալութիւններ Արծաբերդ(\*), Բարձրաբերդ(\*\*) ու Մահմանաբերդի մէջ: Բանտարկած ընկերները կը խոտովածին իրենց «Վեղբերդ», կը յայտնեն իրենց ընկերները խուլութիւնը: Իր կողմէն կը ձերբակալէր Ժիրայր, որ կենթարկէր անտեսիլ տանջանքներու և

չարչարանքներու: «Արծիւաբերդ»-ի ընկերներէն — Կարգեթ Զավուշ, Մէրկէնեան Հանի, Եղբայրը՝ Հայրի Յովհաննէս, Նշան աղա և ինչ—կը զրկուէ «Դաշտ»-ի\*\*\*) բանտը, ուր կը մնան մինչև 1908թ. Մահմանաղլուութեան հռչակումը: Այս բանտարկութեան միջոցին իսկ ան յաջողեցաւ յարմարութիւններ ստեղծել տեսակցելու զբոյի ընկերներու հետ և անոնց միջոցով օգնելու իր բանտակից ընկերներուն: Այդ օգնութիւնը կուգար ըն. Յ. Գ. «Տէլթա»-ի\*\*\*\*) կոմիտէի միջոցով Գանակցութեան Կարմիր Պաշտին:

Մահմանաղլութեան հռչակումով՝ Ժիրայր բանտէն դուրս կուգայ և միայն քանի մը ամիս հանգստանալէ և կաղորուրելէ ետք «Դաշտ»-ի մէջ, կանցնի «ձոր-վերայ»\*\*\*\*\*), ուր կը պնակէր կրթ տեղի ունեցաւ Կիլիկիոյ 1909ի կոտորածը: Կը մասնակցէ «Ձոր-վերայ»-ի ինքնապաշտպանութեան առաջին կուսին: Ժամանակաւոր զինադաշար մը 10 օր ետք, թիրաբերդ երկրորդ կոտորածի մը կը սկսի: Ժիրայր յանկարծակի կուգայ սրճարանի մը մէջ, ուր միամտաբար իր սուրճը կը խմէր, և գնդակահար կիլիսայ տեղն ու տեղը:

Այսպիսով վերջացաւ անխոնջ ու նւիրած, բոլոր ու խորհրդաւոր, վաստակաւոր զործիչի կեանքը:

- \*\*\*) Դաշտ — Հայեղ:
- \*\*\*\*) Տէլթա — Եղիպտոս:
- \*\*\*\*\*) Խոր վերայ — Ատանա:

ՆԵՐՍԷՍ

\*) Խ = Խրաքան:  
 \*) Արծաբերդ — Չէչրու:  
 \*\*) Բարձրաբերդ — Հանրի:

### Գրախօսական

ՄԱԼԽԵՍ. «ԱՊՐՈՒՄՆԵՐ», Ա. ԽԵՍՏՐ, ՊԵՏՐՈՒ, 1931.

Հ. Յ. Գանակցութեան պատմութիւնը գեղ պիտի գրէի: Մինչև այժմ ինչ որ արեւում է՝ սակ նորանիւթի պատարասութիւն է: Հաւաքում է ստալճ, որից սպազայ պատմաբանը պիտի կառուցանէ մեր կուսակցութեան պատմութեան հոյակապ շէնքը: Մալխասի «Ապրումներ»-ը մի թանկարժէք թար է այդ շէնքի համար: Միտմամանակ և ընթերցանութեան հրապուրէչ նիւթ:

Վերջին տարւ տարիներին ընթացում շատ գնահատելի յուշեր լոյս տեսան հայ յեղափոխական կեանքից: Բաական է իրելի, իկկուպ, Քրիտատիրի, Արամի, Արմէն Գարօի, Անդրանիկի, Մասթիսի, Մաքսի, Ռուբինի, Կոմսի, Մամանի, Մ. Շախիրեանի և ուրիշների գրած քերթը: Մալխասի գիրքը սանձնայատուկ տեղ է բունու իրանց մէջ:

Մալխասի «Ապրումներ»-ի գլխաւոր արժէքը ոչ թէ նրա հայրըրած փաստերի մէջ է, թէ և փաստական անսակեղից էլ նրա դիրքը ստատ նիւթ է պարտանալում: Ոչ էլ սանձնայուց արտասովոր են նրա լուսաբանութիւններն ու դատարկութիւնները — յաճախ ինքնուրոյն ու սրամիտ, կրկնում՝ վիճելի և իրականութեան անհամարաստարան: Ամենից արժէքաւորը ապրումներն են

և յեղափոխական կեցեցալը, սրոնցով ախբան հարուստ է Մալխասի հատորը:

Ճիշտ է, կենցաղի ապրքեր կան և մեր ուրիշ յուշագիրներին մօտ, կայ և ապրում: Արամն էլ, Ռուբէնն ու Կոմսն էլ, Մաքսն էլ ախտում են ձերբապատուէլ «Ներսիսական» նախադրանքից և յեղափոխական ղէմքերն ու կենցաղը ներկայացնել իրենց խեղական դոյնով, բայց նրանց մօտ այդ կողմը է միշի այլոց է: մինչևև Մալխասի յուշերում գլխաւորը հինց այդ է: Մալխասը չի ընկում «ձեռ»՝ պէպէրի ու «Ներսիսական» ղէմքերի յետեից: Երեսուցիներին մէջ նա տեսնում է սովորականը, անուամ է կեանքը ինչպէս որ է, գործիչներին՝ իրենց մարդկային յատկութիւններով: Յեղափոխական գործի ստորեան է նրա նիւթը — ստորեան՝ բարի լաւագոյն իմաստով:

Յատկանշական է և Մալխասի գրութեան կղանակը: Թուամ էր թէ լուրջ նիւթը նիւթը է պարտապիքը և կրկնու յուրջ ձեւ: «Երկուշաբուութեամբ լաբար»՝ Մալխասն, ընդհակառակը, խորում է արտաքին լրջութիւնից: նրա գիրքը սկզբից մինչև վերջ դատարկութիւն է, ծիծաղ, ծաղր, հեղանք: Երբեմն մարդ ջղայնանում է նոյն խկ. ինչպէս՝ կարելի է ամենաներկական խըն-

A.R.A.R. @

digitised by

դիմանքի մասին խօսել «Թևթև» ոճով: Բայց Մայիստի ծիծաղն անբարձր անվերջական է ու անխեղձ, անհոգ ու գարթ խօսքերի տակ աշուղիս՝ խորունկ սկը ու պատահանք է թաղանթով զկպի նկարագրած գործերն ու անձերը, որ թիվերգոյի մտքովն իսկ չի անցնում բարկանայ ու կշտամբել հեղինակին:

Ճիշտ է բուրբոսին: մենք շատ ենք բուրբ, անբուրբ լինելու չափ բուրբ: Մի՞նայր քիչ է աչքնուց մեզ: Այսպարհին ու մարդկանց նայում ենք մտայն հայեացքով, և ամեն ինչ մեզ սեւ է երևում: Մայիստը ըմբոստանում է այդ համոտարած «բրուժեան» ու թախիծի դէմ: մի քիչ ծիծաղ, մի քիչ գարթի տրամադրութիւն. բաւ է որան քիթը կախ ման գազ-խնդաղէ՞ք:

Եւ նրան շարժուում է ծիծաղելնէլ, որովհետեւ Գրա ծիծարար արձնատական չէ: Այնուհետք, և այն ջերմ ընդունելութիւնը, որ Մայիստի «Ապրումները» գտան ընթերցող հասարակութեան և քննադատների մօտ:

Ինչ է պատմում Մայիստը իր գրքում: Իր թափառումներն ու սարժումները 1903-6 թւականներին է իր կեանքի դէպքերի շարադրութեամբ՝ աղային ու կուսակցական դէպքերը: Մի կարճ ժամանակամիտք, բայց ի՞նչ, բազմակողմանի ու լեցուն կեանք — այնքան առատ ու յուր, որ գրքի 510 էջը հազիւ բաւական է պարփակելու համար ամբողջը: Ամերիկա, Ժրնև, Թիֆլիս, Երևան, Փարիզ, Սոֆիա, Մայֆաստ, Թոյ, Մակու, ու նորից Կոլկաս, նորից Ժրնև, նորից Ատրպատական ու դէպի՛ Երկիր — ասա Մայիստի թափառումներն ու գործունէութեան զայր՝ մերթ «Հայրենիք»-ի ու «Իրօշակ»-ի միջնադարում, մերթ կովկասեան եռուցեղ մէջ, մերթ իրրկ գաղնակցական լիազօր ներկայապատեցիչ քանակութիւնների մէջ բըզլեր է ստորինների հետ, մերթ՝ սահմանաձգի վրա աշխատող, գէնք ու ռամտաթիւրք է ընկերներ Երկիր փոխադրող: Եւ ի՞նչ էրբաննի հանդիպումներն ու ընկերութիւն: Եւ բարխ է ունեցել ապրելու ու դրժելու Գաղնակցութեան ամեն նա սիրաւոր ստանդորդների և շարքային ստղամների ու գինորների հետ: Գրիտափոր, Չաւրեան, Ռոստոմ, Իսուֆեան, Արմէն Գարօ, Վաստան, Արամ Անտո, Միամանթօ, Մարգղատ, Իշխան, Մարիկ, Հրաչ, Արամ Յակոբեան, Արշեան, Բաշաշան, Գ. Փաշայեան, Երկաթ, Թ. Չաւրեան, Դուսան, Կոտեան, Աղբարանիկ, Մուրտո, Քեօի, Աւօ, Կարճիկ Առաքել, Մամսոն, Ընձայր, Փայլակ, Արամ, Կոստ, Մարգի, Օճանջեան, Համարասպէ և ինչքան ուրիշ անունն ու պակաս յայտնի ընկերների ու գործիչների հետ է ջան տեսել ու ջան լսել Մայիստը: Եւ բոլորի մասին ի՞նչ ջերմ, ինչ գորովաւ մեծ խօսքեր ունի նա, ի՞նչ յուզիչ յիշատակներ: Բայց, մանաւանդ, Սիմոն Չաւրեանի, որ նրա պաշտամունքի ստարկան է, անհասանելի իղէայր: Կարծեմ միակ մարդը, որի մասին միշտ խօսում է աւանդ կատակի, անխօսն անձամանքով, գլուխը երկեւզածութեամբ խոնարհած:

Արտաշարժ է, մանաւանդ, Մայիստի ցոյց տած գլուխդրանքը զկպի գործիչների «գտնարձ» դասը, զկպի շարքային ընկերներն ու մարտիկները: Մեծ գէմքերից աւելի սրանք է ներկուս նա իր ուշադրութիւնը: Եւ ի՞նչ սրանելի տրեւր են դուրս գալիս նրա գրչի սակից, փառքի թեւեղ չվաղող, բայց փառասրակի տրժանի ի՞նչ հերոսական հոգիներ, որնցով ախքան հարուստ է հայ յեղափոխութիւնը, բայց, մասնաւորապէս, Հ. Յ. Գաղնակցութիւնը:

Մայիստի գրքի բովանդակութիւնը — անօգուտ լինի, անկարելի է ներկայացնել, այնքան բարձրադաս, խնայած ու հեւ ի հեւ իրար յարողողել նրեթ է հաւաքուած: Պէտք է կարգաւ ամբողջը, ծալքից ծայր, որովհետեւ ամէն էջ մի նոր անակնկալ ու քաղցր վայելք է պարունակում: Կան էջեր, սրանք ներշնչած բանաստեղծութիւններ են, ինչպէս, օրինակ, Մասիտի ու Արազածի դուրը:

«Ի՞նչ դիմաց երկու յարեանական հոգիներու նման, Արաբատեան գալուցն ցուահն են կանոնում Մասիտն ու Արազածը: Եթէ Մասիտը չոր ու ցոմաք, բայց մեծ ու մեհ, Վահագն է մը Կայրենի ատուածներին, Արաբատը գիշուհի Աստղին է, մայր բարութեանց, սղին բեղմնաւորութեան, որձէ կը բիւր կախն ու մեղրը, սարերու ծաղիկն ու կանանքը և կենսունակութիւնը չըբապտող երկրին: Եսա լայն խարխուղ մը խրամ հայրենի երկրի կրճէին՝ ան իր անսպար ստիւքներէն կը հօսեցնէ աստիտակ ջրերը գուլալ: Անոր լանջերը ծածկեամ են հարարուր ծաղիկներով իրենց գիծողցնող բուրմունքով, և արձախ բոյներու նման հաս ու հոն թառած աղաւաղի գիւղերով: Մարի գազաթին, չորս պուրաներու մէջ և շուրթը, գրախառնին կայուն է ընդարձակ, անկերջ Տարիպունելով: Համարածում կայալ, կայալ ջան, կայալ: Արազածը Հայաստանի բողմնաւորութեան ան իսկ է, անսպար շտեմարանի և ատուածային հոգատարը գիւղացուն:»

Մայիստի պատմած զգայաթիւ դէպքերից անանձնապէս հետաքրքրական է նրա ճամբորդութիւնը Եամդիւնն, տեսակութիւնը և ունեցած իրականութիւններ Եէյիթի հետ: Եամդիւնն Եէյիթի Թիւրքիայի կիսանկար մեծ աւտոպոստներից մէկն էր, որի բարկաւորութիւնը շատ օգտակար պիտի լինէր Գաղնակցութեան համար: Մայիստը, ամերիկացի քօչիկ անանտակ, արկածայի ուղեւորութիւն է կատարում և ընդգռուում է Եէյիթի կողմից: Երկու անգամ գլուխ դիւրի խօսակցութիւն է ունենում հետը և աշխատում է համոզել, որ հայերն ու քրդերը հնուի հարապատ եղբայրներ» են, երկիկ շահէն էլ նոյնն են, ուստի նրանք պէտք է մտանոն Համապետական բարեփոխումները առաջ բերելու նպատակով: Հետաքրքրական է Եէյիթի պատասխանը:

«Ի՞նչ, հայեր, ասում է նա, մեր քրիստոնէյ լինելու հանդամանքով, որոչ պաղտպանութեան ենթակայ էք: Հազիւ թէ զիւղի մը մէջ հայու մը քիթը կտրուի, և ահա Պոլսոյ մեծ կապանիւնը կը բողբեն կատարած անարդարութեան դէմ: Թիւրքը իր սպանէ, քիւրդն է մեղաւոր: Կատակարութիւնը կը հայածն, դարձեալ քիւրդն է մեղաւոր: Չկայ դէպքերին մը, որուն հեղինակը քիւրդը չլինի, և չկայ զուրում մը, որուն կենական հայը չլինի: Այդպէս են Հատուացիք մեծ պնտնութիւնները: Այդպէս ալ կրէք դուք: Չկայ սիրելու մասնաւոր պատճառ մը չունինք, բայց դիտենք, որ այս հողին վրա դուք այնչափ էին էք, որչափ մենք և որ նորից Թիւրքն է, որուն հանդէպ երկուքս ալ սիրալիք տրամադրութիւն մը ունենալու պատճառ չունինք: Մեր հողամասը ընդարձակ է, լայն ու բայն կը բաւէ մեր երկուքին ալ: Սկսելով Պաշկալէն ու Նորոտուզն մինչև Մուսուլ մերն է, վերն ալ՝ մերը: Ահա այս բանի մասին է, որ պէտք է մտածենք մենք: Եթէ դուք մեզի աշակիցը, մենք ալ պատճառ մը չունինք միւր հակառակելու՝ մեր ծրարկներու իրադրման համար»:

Երբ ինչիւրը գային և դործնական ստաճարկներ, Եէյիթը պահանջում է՝

- «ա) Որ մենք Եամդիւնն կամ այլուր պիտի հաստատանք իր ծախսովը փամփուշտի գործարան մը, որմէ օգուտելու մենք ալ իրաւունք ունինք:
- բ) Որ Եամդիւննի ծխախոտի արտաճումը զկպի Երկրտոս կամ եւրոպական հրապարակներ, մեր ներկայացուցիչներու միջոցով պիտի յաղոցնենք... (Մըխախտան կը Եէյիթի հասոյթի զիտաւոր աղբիւրը):
- գ) Որ մենք իր գծած սահմաններու նկատմամբ ոչ մէկ ստարկութիւն պիտի ունենանք:
- դ) Որ մենք եւրոպական քրիստոնէայ մեծ պետութիւններու օժանդակութիւնը ձեռք պիտի բերենք յօղուս Գիւրգիտանիք»:

Դժբախտաբար, այս լանկարկութիւնները յետագային ընթացք չեն ստանում և անցնում են անպառաջ:

A.R.A.R.®

digitized by

Մայիսն աչյուցում է և պարսկա-իրացական սահմանադրիկ Մասնան շրջանի առորինների իշխան Պճանին՝ հայաստրական գործակցութեան հող պատրաստելու նպատակով, նոյնպէս ստանց գործնական արգիւնքի:

... Մասունի անորմից յիտը Անգրանիին իր ընկերներով գալիս է Մայմաստ՝ Կոլիպան անցնելու համար: Մայիստոր անմիտրապահ հնարամի իտքերս ունի այդ իրօք որ, սքանչելի իմրէ հանգչկ. «Արդէն Անգրանիին անուր կարծեր էր սխալալ մը կուտղ Հայաստանի: Գժտար թէ գտնէր ամենայնու ընկամ զիւրի մը երգիքը, ուր չըրէր Անգրանիի, որ արդէն անձ մը չէր այլեւս, այլ սոցալանի, լեզնեղական հետք մը, բոլոր հերոսները մարմնաւորը... Անգրանիի անուր իր մէջ էր պարսնակէր Գէորգ Չառուչն ու Մրատապի Մուրատը, Կայծար-Աւազարը, Աւօն, Մէշրոն ու Սեպուրը, Մշեցի Կորինն ու Մջօն, Կոթոյի Հաճին և Ամրատը, և բարձրաթիւ Մասունցի ու Մշեցի անկրիւղ կուտղներ: Արժողջ հաւաքականութեան անուն էր ան»:

Ու տայիս է մի պատկեր այդ հերոսների մտերիմ ընկերական կեանքից. «Ձմրի կեղրոնական դէմքը Անգրանիին է: Համեստ, իր հերոսութեան զիտ անդրատակից, մեծ ընկեր մը, ասունց որևէ յաւակնութեան, ան գարմանալիօրէն կեղանի գիմաթոմով գուրս կուտար, նման անւանի կարիճներով շրջապատւած: Այս խումբը, Անգրանիին ալ մէջը լինելով, իմ գրաս կը ձգէր գործնապէս տպաւորութիւն մը: Կը թէր թէ աստեք Կիլիկիոներու ցեղէն սերած էին. ամէն ինչ ասանց մէջ էր ձեռ շարժով կարտայայտուէր, բայց հակառակ աստոր, խաշոր երախտներու նման ատուրնէ մինչև իրիկուն իրար հետ կը զրգակին: Ու ի՛նչ զգտուք: Հոս սյուրի բուն, որ այլ, որպէս թէ կատակ կուշները, կը սկսին գրեթէ միշտ Անգրանիի թէլաղրանքով: Հանգարտ նստած, ավէն-ձմրին կը խօսակցէինք, մէկ ալ ան աչք ինքնր աղոցմէ մէկն ու մէկին, քովինք մզալորին մէկ հատ մը Տասցինը... Եւ ա՛հ կը սկսէր կիլիկյանի վայրենի մենաւարտ մը, և բոլոր կատարած զագաններու նման իրար կը խաւուէին: Անշուշտ, այս կրնար հետաքրքրէ լինել... հետուէն գիտելու համար, սակայն, իրենց մէջը... չէ, այրեց, համարանգամ լինելու բնու միտք լունէն և արագ կը ջատկէի պատուհանի մը մէջ, հոն տեղադրուելու, որպէսզի պատահական հարած մը շատանայի, որը իրենց համար կրնար լանձմ մը լինել, բայց ինձ համար մինչև եօթներորդ երկինք հասնելու ձրի անցաղբ մը կրնար դասնայ»:

Ու այս «կիլիկյաններ» կողքին ա՛հ Չմօն՝ կոթուրցի քրպատստ պատաւ հայուհին, որ Գանձակցութեան սանց կերպուր է կիտմ տղաների համար, լապց աւնում է, սունն է մաքրում: Երբ այլեւս այնքան ծերանում է, որ չէ կարողանում այխատել, Մարգարետը ճանապարհ է դնում՝ սաղով նրան 20 թուման, որ ամբողջ մի հարստութիւն էր այն ժամանակ: Չմօն մերժում է: «Ես քեզի համար չալխատեցայ, ազգին համար բրի», պատասխանում է նա: Ան գտմ է եկեղեցի ցու գաւիթը, ուր և մեղնում է երկու շաբաթ շետոյ: Մայիստոր յուզած այս մեծութեան առջև՝ մտածում է.

«Շատ լուրջ ինձ համար հարց կը ծագի, թէ ո՞վ աւելի շատ սուտ յեղարկութեան անո՞նք, որ գիտակցօրէն ապրինք այխատուելան, շատ անգամ այ վրատալով կեանքերին, թէ՛ այդ իսկզ կինը ու իր նմանները, որոնք աւելին, մաքրելին, լապին, թափեցին ստանց վարձարութեան սկնկալութեան, ինչ որ ազդի սրբոյն համար»:

Ահա և մէկ ուրիշ պատկեր.  
Մայիստը Պարսկաստանից գալիս է Ժրնն և շատպում է «Իրօշակ»ի իմրտպատուներ: «Չմայր կը դարնեն: Դուրը կը բանայ մէկը, որ կը թւի թէ պատաւ

կին մէ, սոյամարու հալուստով: Կարծեմ, անպարտաճիտ մէջ, ստանց բարեկեւտ վեր կը վազեմ ընկերները անննելու: Ոչ ոք չկայ»:

Ընդունարանին կանգնի խորհրդասենեակը, որ աշխատութեան սենեակն է Բիւրօի, տեղ մը, ուր ընդհանրապէս հիւրերը չեն մտնել: Սեղանի վրա Պարսկաստանէն զրիւած նամակ մը կը տեսնեմ ու իմ ուղարկածս արխիւը, որ դեռ չէ բացւած: Ձեմ դիտոր ինչօ՛ւ, նամակը կը կարգած կամ աւելի ճիշտ է ըսել, կը փորձեմ կարդալ.

— Ան չէ ամա, այսուղ Գէ-Ալիին պա՞ղը կարծեցիւր...

Յանկարծակիի կուգամ: Դուրը բացողն է, որ ետակա եկեր և աւելի նման հետեւեր է ինձի: Ու հիմակ, ձեւք մէջըն, նայեա՞ծք մը, որ հեղանական բան մ'ունի, մէջըն վար կը շարէ դիւ:

Ա՛ս ինչացու է, կը մտածեմ... կարծեմ քեզ մ'ալ կը շխտեմ.

— Հարցնելը ամօթ չըլլայ, հրամանքը ո՞վ կուտես...

Ձե՛, աս մարդը ինձի ձեռք է սուր, կը մտածեմ. քեզ մ'ալ սոցալի կողմ, որ չէնք-չնորք վերաբերմունք մը չեմ ունեցեր հետ: Երբեք, մեղքս քաւելու համար շտտ քաղաքալար կը շարցնեմ.

— Ընկերներէն ոչ ոք չկա՞յ. ժամը քանի՞ն կուտան որ...

— Ընկերները ո՞վ կըլլան կոր որ...

Տէր Ատուած, այս պատուը հետո խաղո՞ւ ելած է: Ու երեսն ի վեր կը պտուծ, որ ես Պարսկաստանէն կուգամ ու անտուն Մայիսա է: Կարծեմ, անմեղան հայհոյանք մ'ալ բերնէ կը փախի:

— Մօ՛, սխալու, մարդու սկս անունդ չի ստա՞ր, — ու ծպուած պատաւը ձեւքը կերկնցնէ ինձի՛. աւելցնելով —

— Ինձի Տեար Անտոն ձեւքը:

Աւելի քան սերճախօս:

Իրօք որ, աւելի քան սերճախօս. Տեար Անտոնը ներկայացած է բոլորովին հարապատ դեւերով: Բայց նոյնքան հարապատ է և ինքը՛ Մայիստը...

Ու այսպիսի տխուր ու պատկերներ անհաշի են Մայիսաի բրքի մէջ: Կարիկ չէ պալունէ. կրիտում եմ՝ սկսած է կարդալ:

Մի երկու խօսք էլ դքքի, այսպէս ստած, ստերաւոր կողմի մասին: Սուրբ, համարաբար, երկրորդական նշանակութիւն ունեցող փաստական կամ ժամանակագրական անձտութիւնների մասին չէ. զրանց անխտակելի են այդպիսի խօշոր աշխատութեան մէջ: Սուրբ Մայիսաի մի քանի սխալ, ասենք աւելին, անլուջ գնահատութիւնների մասին է, ինչպէս, օրինակ, 1903 թւի արշաւանների, կամ հայ-թաթարական ընդհարումների և կամ ընկերվարութեան թիթի գնահատանքը: Բայց անլրլթիւնը զլուր ստած արշաւում է, մանաւանդ, երբ Մայիսաը սկսում է արժէքաւորելի Կովկասի դէպքերը: Առտական աստղին յեղափոխութեան ստաղ բերած ետոգեոլ երեքի փրկուրն է միայն նկատել նա և այդ փրկուրով է գտաւում դէպքերի հաթիւնը, ուստի և զարմանալի չէ, որ նա արճանադրում է միայն՝ «կարմիր մաքերու, մարտական ծրարիանրու, նոր առաջարկութիւններու կատարելալ Բարկուն մը»: «Թէրտեր, վարձարեան, խառուժպան, ուսանող երայրացիք էին ամբոխին». «տոցիակովմի հաշիւը ընդհանուր գիտելութիւն մը ստաղ էր բերած, ու ամէն շրջան հեւ ի հեւ սոցիալական բարեկորոզումներու է ձեռնարկած», «մարդիկ լուրջ և երկուզած դէմքով կը խօսէին Մարքի «Կապիտալ»ի մասին, հոչ չէ թէ ոչ կարգացած և ոչ ալ տկամ՝ սոցիալիստական Յայտաւորքը, որ դարձեր էր անտարկելի ու անխալական սքրութիւն սրբոց մը»...

Ինքը՛ Մայիստը, ի հարկէ, ճայր գիւրք կարդալու մեղքը չէ գործած», և շատ է գուր, որովհետեւ կթէ

A.R.A.R. @ digitised by

կարողացած լինելու, անշուշտ, այդպիսի արտասուց կարծիքներ չկը յայտնի և կիմտնար, որ այլ «Յարամատուրբը» Գաղմակցութեան Համար էրրիք քանտարիկէի ու անտարական» չէ կրած: Բնդհակառակը, Հէնց Մարխասի նկարագրած ժամանակաշրջանում գաղմակցութեանը իր դրոշմաբանական պաշտօնը չէր արձակել: Հէնց, օրինակ, «Յատափ» մատենաբարի մասին դրածները կ'ըն մեծարժէք աշխատութիւններ կան «Յատափ» մատենաբարի շարքում, ինչպէս, Ս. Չաւարեանի, Գ. Պատարի, Ա. Շախմատեանի, Արամայիսի, Ահարոնեանի, Վարանդեանի զբերը:

Բայց Մարխասը Հելլուսթիսեան սրէներէ է հատում ժամանակ, էջմիածնի կենտրոնական ժողովի մասին փոստիկ. նա բնաւ չի հասկացել այդ ժողովի կոմիտէն, որի մասին զազափար է յայտնում դարձեալ Վերլանդեան հրատարակիչը ստացած տպագրութիւն-

ներով: Երբ համար այդ ժողովը կը ճառակեայէս գաղմակցական ճատարականութեան Համար անցման ասպարէզ մը, որ ամէն մէկը կաշխատէր իր հուճարը ցուցադրել տաուկազոյն չափով», «էջմիածնի արդարին մեծ ժողովը պարզապէս ճատարանութեան մրցահանդէս մ'էր, և թէ՛ նոյն իսկ ամբողջ գեղեցիկ ճատարահայր. թէ՛ բնկարի կեղև մը լինելին»: Քարեքախտաբար, էջմիածնի այդ նշանաւոր ժողովը շուտ վերջացաւ, առանց ժամանակ տալու, որ մեր բոլոր ինքնարժէքեղ ճանկերը և մեր ճակիչութիւններով բոլորը ինդպիսի լինը վրա:

Հարկ կ'ուշ ատելու, որ Մարխասը ոչ մի ստորտակերկութիւն չունի էջմիածնի կենտրոնական ժողովի մասին և պարզապէս կրկնում է Համբ. Առաքելեաններէ ժամանակին տարածած բամբասանքները: Բարեքախտաբար, այսպիսի էջերը աննշան տեղ են բռնում նրա զբոյժ մէջ և որքան և նեղի՛ք չեն կարող կտրել ամբողջ հատորի դիմը: Մարխասի «Աղբրումները» արժէքաւոր դրոշմ են: Մայթենք, որ յայնքո ճատարներն էլ շուտով լոյս տեսնեն: Ս. Վր.

**Մ Ա Մ Ո Ւ Լ**

«Հայրենիք» օրաթերթ.  
Տարեկան բամբակներ՝ 6 դոլար  
կէս տարեան՝ 3 դոլար

«Հայրենիք» ամսագիր.  
Տարեկան՝ 5 դոլար

«Հայրենիք» օրաթերթ և ամսագիր միասին.  
Տարեկան՝ 10 դոլար

Հասցէ՝ Hairenik Press, 13-15 Shawmut st.  
Boston Mass, U. S. A.

«Ասպարէզ» շաբաթաթերթ.  
Տարեկան՝ 2 դոլար  
Հասցէ՝ «Aspares», P. O. Box 865.  
Fresno, Calif., U. S. A.

«Յուսաբեր» օրաթերթ.  
Տարեկան՝ 40 շիլին  
կէս տարեան՝ 20 շիլին  
Հասցէ՝ «Houssaper», B. P. 868,  
Le Caire, Egypte.

«Նոր Արար», օրաթերթ.  
Հասցէ՝ 116, rue «Tzar Boris»,  
Sofia, Bulgarie.

«Յառաջ», օրաթերթ.  
Տարեկան՝ Յրանաւ և դառութիւնը 140 Փր.,  
Ամերիկա 8 դոլար, Անգլիա, Եղիպտոս, Զել-  
ներիս, Իտալիա՝ 250 Փր., Ռուսի իրերը  
Ներ՝ 200 Փրանք:  
Հասցէ՝ «Haratch», 17, rue Damesme, Paris (13).

«Նոր Օր», օրաթերթ.  
Հասցէ՝ «Nor Or», 20 A, rue Vouli,  
Athènes, Grèce.

«Հորիզոն», օրաթերթ,  
Տարեկան Եռուստան՝ 300 տրախի, արտա-  
սահման՝ 150 Փրանք:  
Հասցէ՝ «Horizon», 2, Rue Franguini,  
Salonique, Grèce.

«Ազդակ», երկօրեայ.  
Տարեկան՝ 6 դոլար  
կէս տարեան՝ 4 դոլար  
Հասցէ՝ «Azdag», B. P. 587,  
Beyrouth, Liban.

«Ալիք», շաբաթաթերթ.  
կէս տարեան՝ 35 Փրանք  
Հասցէ՝ 27, Ave. Gavan-os-Saltaneh,  
Téhéran, Perse.

**Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Ի Ի Ի Ե**

1931—1932 (ձմրայրական)	1	Թիւրքիոյ շուրք	16
Կուակցակաւոյ քեան քնքրեանքը (Առատոր)	5	Թղթակցութիւններ	18
Մարքսիզմի-Լենինիզմի Ինստիտուտը	8	Միք գոնէքը	19
Կարմիր գծից ներս	10	Դրախտապալան	21

« Դ Ռ Օ Շ Ա Կ » - Ի  
Թիւն արժէ 2 Փր. 50 սանո.

« Դ Ռ Օ Շ Ա Կ » - Ի հասցէն՝  
M-lle S. AGOPIAN  
5, rue des Gobelins, PARIS (13°)

Gérante: Delamallerie Hambartzoumian

Imp. de Navarre, 5, rue des Gobelins. PARIS (13°)